ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2015
02.2015
03.2015
04.2015
05.2015
06.2015
07.2015
08.2015
09.2015
10.2015
11.2015
Նոյեմբեր
12.2015

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

Թողարկման 22-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2015

Նոյեմբեր

թիվ 11 (207)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ

4 «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-117-Ն ՀՀ օրենքը

5 «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-133-Ն ՀՀ օրենքը

11 «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-134-Ն ՀՀ օրենքը

12 «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-135-Ն ՀՀ օրենքը

13 «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-136-Ն ՀՀ օրենքը

14 «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-137-Ն ՀՀ օրենքը

15 «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-138-Ն ՀՀ օրենքը

16 «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-139-Ն ՀՀ օրենքը

22 «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-140-Ն ՀՀ օրենքը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

24 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ԹԵԼ-ՍԵԼ» ՓԲԸ վճարահաշվարկային կազմակերպության 2 մասնաճյուղի անվանափոխության, «Մանիտուն» ՍՊԸ վճարահաշվարկային կազմակերպությանը և «Անելիք բանկ» ՓԲԸ-ին «Ռիա Մանի Թրանսֆեր» (RIA Money Transfer) արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն տրամադրելու, ինչպես նաև «Անելիք» արտասահմանյան դրամական փոխանցումների համակարգը ՀՀ ԿԲ կողմից գնահատված վճարահաշվարկային համակարգերի անվանացանկում ընդգրկելու վերաբերյալ

24 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ԹԵԼ-ՍԵԼ» ՓԲԸ վճարահաշվարկային կազմակերպությանը «Անելիք» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն, «ԱՍ Մաստեր» ՍՊԸ-ին գրավատնային գործունեության իրականացման լիցենզիա, ինչպես նաև «ԲԵՍՏ» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ին մասնակցության թույլտվություն տրամադրելու վերաբերյալ

24 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «Ամերիաբանկ» և «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ների համապատասխանաբար «Արշակունյաց պլյուս» և «Չարբախ» մասնաճյուղերը գրանցելու, ինչպես նաև 1 ԱՍՊԸ-ի, 3 գրավատների նկատմամբ տուգանք կիրառելու և 2 արտարժույթի փոխանակման կետերի, 2 ՈՒՎԿ ՓԲԸ-ների նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

24 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 234Ա որոշումը ֆինանսական շուկայում ՀՀ կենտրոնական բանկի գործառնությունների տոկոսադրույքների վերաբերյալ

25 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 216-Ն որոշումը «Հազար դրամ անվանական արժեքով 2015 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամները շրջանառության մեջ դնելու մասին»

28 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 223-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերի և վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից հայաստանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության իրականացման հատուկ կարգ և վճարահաշվարկային ծառայությունների մատուցման կանոններ, ինչպես նաև հայաստանյան վճարահաշվարկային համակարգերի կանոնների բովանդակությանը ներկայացվող պահանջ սահմանելու մասին»

30 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 224-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մայիսի 15-ի թիվ 138-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին»

31 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 227-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 269-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին»

32 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 229-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 166-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

40 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 236-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

44 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 1 պաշտոնական պարզաբանումը «Ֆինանսական կազմակերպությունների համար գույքի գնահատում իրականացնող ընդունելի գնահատողների ընտրության մասին»

47 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 2 պաշտոնական պարզաբանումը «Բռնագանձման գործընթացում առաջացող որոշ հարցերի մասին»

52 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՆԵՐԸ

«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին[**]

Հոդված 1. «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 21-ի ՀՕ-142-Ն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Սույն օրենքով սահմանված կարգով երաշխավորված ավանդի չափերն են՝

ա) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը տասը միլիոն հայկական դրամ է.

բ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն արտարժութային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը հինգ միլիոն հայկական դրամ է.

գ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և դրամային բանկային ավանդի գումարը հինգ միլիոն հայկական դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը՝ մինչև տասը միլիոն հայկական դրամով.

դ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և նրա դրամային բանկային ավանդի գումարը պակաս է հինգ միլիոն հայկական դրամից, ապա երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ և արտարժութային բանկային ավանդը՝ հինգ միլիոն դրամի և հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
12 նոյեմբերի 2015 թ., Երևան, ՀՕ-117-Ն

[*] *ՀՀՊՏ 2004 N 72 (371), 28.12.04:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2015 թվականի հոկտեմբերի 26-ին (ՀՀՊՏ N 76 (1165), 18.11.15):

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին[**]

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի հունիսի 30-ի ՀՕ-69 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետը «անձանց,» բառից հետո լրացնել «կազմակերպություններին ճանաչում է որպես ֆինանսական խումբ» բառերով:

Հոդված 2. Օրենքի 7-րդ, 22-24-րդ, 26-28-րդ, 56-րդ հոդվածների, 18-րդ հոդվածի վերնագրի և 3-րդ մասի բոլոր «Տեղակալ» բառերը՝ իրենց հոլովածներով, փոխարինել «տեղակալներ» բառերով՝ համապատասխան հոլովածներով:

Հոդված 3. Օրենքի 18-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «փոխարինում է Կենտրոնական բանկի նախագահի տեղակալը, իսկ տեղակալի» բառերը փոխարինել «փոխարինում է Կենտրոնական բանկի նախագահի տեղակալներից մեկը, իսկ տեղակալների» բառերով.

2) 2-րդ մասի 2-րդ պարբերության «Կենտրոնական բանկի նախագահի տեղակալը նշանակվում է» բառերը փոխարինել «Կենտրոնական բանկի նախագահի տեղակալները նշանակվում են» բառերով:

Հոդված 4. Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «տեղակալից» բառը փոխարինել «երկու տեղակալներից» բառերով:

Հոդված 5. Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) «ժբ» կետը «բանկերի» բառից հետո լրացնել «ֆինանսական խմբերի» բառերով.

2) «իա» կետը «անձանց» բառից հետո լրացնել «, ֆինանսական խմբերի» բառերով.

3) «իբ» կետը «բանկերում» բառից հետո լրացնել «, ֆինանսական խմբերում (տեսակներում, ենթախմբերում)» բառերով:

Հոդված 6. Օրենքի 21-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «տեղակալի» բառը փոխարինել «տեղակալներից առնվազն մեկի» բառերով.

2) 3-րդ մասի առաջին նախադասության «կամ նրա տեղակալը» բառերը փոխարինել «կամ նրա տեղակալներից առնվազն մեկը, ընդ որում՝ խորհրդին մասնակցող նախագահի և տեղակալների թիվը չպետք է գերազանցի խորհրդին մասնակցող խորհրդի մյուս անդամների թիվը» բառերով:

3) 3-րդ մասի վերջին նախադասության «նրա տեղակալի ձայնը որոշիչ է» բառերը փոխարինել «խորհրդի նիստը նախագահող նրա տեղակալի ձայնը որոշիչ է» բառերով:

Հոդված 7. Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի և 2-րդ մասի առաջին և երրորդ նախադասությունները «բանկերի» բառից հետո լրացնել «ֆինանսական խմբերի» բառերով:

Հոդված 8. Օրենքի 5.1-ին գլխում՝

ա) 39.1-ին հոդվածի 1-ին մասի առաջին նախադասության «և Բյուրոյի» բառերը փոխարինել «, Բյուրոյի և ֆինանսական խմբերի» բառերով.

բ) 39.10-րդ հոդվածի, 39.12-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի, 39.13-րդ հոդվածի առաջին նախադասության, 39.14-րդ հոդվածի բոլոր «, բյուրոյի կամ վարկային կազմակերպության» բառերը փոխարինել «, բյուրոյի, վարկային կազմակերպության կամ ֆինանսական խմբի» բառերով.

---

[*] *ՀՀԱԺՏ 1996 N 12:*

[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*

Ընդունված է 2015 թվականի նոյեմբերի 12-ին (ՀՀՊՏ N 77 (1166), 25.11.15):

գ) 39.12-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետի «, Բյուրոն կամ վարկային կազմակերպությունն» բառերը փոխարինել «Բյուրոն, վարկային կազմակերպությունը կամ ֆինանսական խումբը» բառերով:

Հոդված 9. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.2-րդ գլխով.

«ԳԼՈՒԽ 5.2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված 39.15. Ֆինանսական խումբը

1. Սույն օրենքի և ֆինանսական կազմակերպությունների գործունեությունը կարգավորող այլ օրենքների իմաստով ֆինանսական խումբ են համարվում փոխկապակցված՝ երկու կամ ավելի ֆինանսական կազմակերպությունների խումբը և վերջիններիս մայր կազմակերպություն(ներ) հանդիսացող կազմակերպություն(ներ)ը (առկայության դեպքում):

2. Սույն հոդվածի 1-ին մասի կիրառման նպատակով՝

1) մայր կազմակերպություն է համարվում կազմակերպության նկատմամբ վերահսկողություն ունեցող կազմակերպությունը: Վերահսկողությունը որոշվում է համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտ 10-ի.

2) ֆինանսական կազմակերպություն են համարվում բանկը, վարկային կազմակերպությունը, ներդրումային ընկերությունը, ներդրումային ֆոնդի կառավարիչը, ապահովագրական (վերաապահովագրական) ընկերությունը.

3) կազմակերպություն են համարվում ֆինանսական խմբի մեջ մտնող ֆինանսական կազմակերպությունը և մայր կազմակերպությունը միասին, եթե այլ բան նախատեսված չէ սույն գլխով.

4) կազմակերպությունները համարվում են փոխկապակցված՝ համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքի.

5) պատասխանատու անձ է համարվում ֆինանսական խմբի անդամ կազմակերպությունների ընտրած և Կենտրոնական բանկի նշանակած կամ սույն օրենքով սահմանված դեպքերում Կենտրոնական բանկի նշանակած ֆինանսական խմբի անդամ հանդիսացող ֆինանսական կազմակերպությունը, որը պարտավոր է սույն օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով, ժամկետներում և պարբերականությամբ իրականացնել սույն օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով իրեն վերապահված գործառույթները, որոնց չկատարման համար ենթարկվում է պատասխանատվության ֆինանսական հատվածի այն օրենքի համաձայն, որով կարգավորվում է պատասխանատու անձի՝ որպես ֆինանսական կազմակերպության գործունեությունը:

Հոդված 39.16. Կազմակերպություններին որպես ֆինանսական խումբ որակելը

1. Սույն օրենքի 39.15-րդ հոդվածի 1-ին մասում նշված հիմքերի առկայության դեպքում կազմակերպությունները որպես ֆինանսական խումբ են որակվում (ճանաչվում) Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ: Սույն մասում նշված որոշման ընդունման համար հիմք կարող է համարվել Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքը կամ կազմակերպությունների խմբի լիազոր ներկայացուցչի (այսուհետ՝ սույն գլխում՝ Լիազոր ներկայացուցիչ)՝ որպես ֆինանսական խումբ որակելու մասին դիմումը: Լիազոր ներկայացուցչի ներկայացրած դիմումը պետք է պարունակի կազմակերպություններին որպես ֆինանսական խումբ որակելու համապատասխան հիմնավորումներ, ինչպես նաև առաջարկություն պատասխանատու անձի թեկնածության վերաբերյալ կամ առաջարկ Կենտրոնական բանկին՝ իր նախաձեռնությամբ նշանակել պատասխանատու անձին:

2. Կազմակերպություններին որպես ֆինանսական խումբ որակելու կարգը, ժամկետները, լիազոր ներկայացուցչի դիմումի և հիմնավորումների ներկայացման կարգը և ձևը սահմանում է Կենտրոնական բանկը նորմատիվ իրավական ակտերով:

3. Կենտրոնական բանկը, արդյունավետ վերահսկողություն իրականացնելու նպատակով ֆինանսական խմբի չափերից, կառուցվածքի բարդությունից և ռիսկայնությունից ելնելով, կարող է ֆինանսական խումբը դասակարգել տեսակների, ենթախմբ(եր)ի:

[*] *ՀՀԱԺՏ 1996 N 12:*

4. Կենտրոնական բանկը իր նորմատիվ իրավական ակտերով սահմանում է ֆինանսական խմբերին տեսակների, ենթախմբերի դասակարգման սկզբունքները՝ ըստ ռեզիդենտության և այլ չափանիշների:

5. Կազմակերպություններին ֆինանսական խումբ ճանաչելու մասին սույն հոդվածի 1-ին մասում նշված որոշումը կայացնելուց հետո այդ որոշման կայացման համար սույն օրենքի 39.15-րդ հոդվածով նախատեսված հիմքերի վերացման դեպքում պատասխանատու անձը դիմում է Կենտրոնական բանկ՝ առաջարկելով դադարեցնել կազմակերպություններին որպես ֆինանսական խումբ որակելը՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորումներ: Սույն մասում նշված դիմումը ստանալու պահից 30-օրյա ժամկետում Կենտրոնական բանկի խորհուրդը, հաշվի առնելով 39.15-րդ հոդվածով նախատեսված հիմքերի հետագա առաջացման հավանականությունը, որոշում է կայացնում տվյալ կազմակերպություններին որպես խումբ որակելը դադարեցնելու վերաբերյալ կամ որոշում է կայացնում 1 տարին չգերազանցող փորձաշրջան տրամադրելու վերաբերյալ: Փորձաշրջանի ընթացքում կազմակերպությունները շարունակում են համարվել ֆինանսական խումբ: Սույն մասով սահմանված փորձաշրջանի ժամկետի ավարտից հետո Կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է կայացնում տվյալ կազմակերպություններին որպես ֆինանսական խումբ որակելը դադարեցնելու վերաբերյալ կամ որոշում է կայացնում շարունակելու տվյալ կազմակերպություններին դիտարկել որպես ֆինանսական խումբ: Կազմակերպություններին ֆինանսական խումբ ճանաչելու մասին սույն հոդվածի 1-ին մասում նշված որոշումը կայացնելուց հետո այդ որոշման կայացման համար սույն օրենքի 39.15-րդ հոդվածով նախատեսված հիմքերի վերացման դեպքում, եթե պատասխանատու անձը չի դիմում Կենտրոնական բանկ՝ առաջարկելով դադարեցնել կազմակերպություններին որպես ֆինանսական խումբ դիտարկելը, ապա Կենտրոնական բանկը կարող է դադարեցնել կազմակերպություններին որպես խումբ որակելը: Այն դեպքում, երբ սույն օրենքի 39.15-րդ հոդվածով նախատեսված հիմքերն առկա են, սակայն Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով ֆինանսական խմբի կառուցվածքով և ֆինանսական խմբի անդամների փոխհարաբերությունների առանձնահատկություններով պայմանավորված խմբային ռիսկեր չեն առաջանում, Կենտրոնական բանկը կարող է դադարեցնել կազմակերպություններին որպես ֆինանսական խումբ որակելը:

6. Եթե կազմակերպություններին որպես ֆինանսական խումբ որակելուց հետո ֆինանսական խմբի կազմում տեղի են ունեցել փոփոխություններ, ապա Կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է կայացնում ֆինանսական խմբի կազմի փոփոխության վերաբերյալ: Սույն կետում նշված որոշման ընդունման համար հիմք կարող է հանդիսանալ Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքը կամ պատասխանատու անձի կողմից Կենտրոնական բանկ ներկայացված հիմնավորումները:

7. Կազմակերպություններին որպես ֆինանսական խումբ որակելու, ֆինանսական խմբի կազմի փոփոխության վերաբերյալ որոշումները Կենտրոնական բանկի խորհուրդը կայացնում է այդ որոշումների կայացման համար հիմք հանդիսացող հանգամանքների առաջացման (լիազոր ներկայացուցչի դիմում, Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքի համար անհրաժեշտ տեղեկությունների բացահայտում) պահից 30-օրյա ժամկետում:

Հոդված 39.17. Ֆինանսական խմբերի ռեեստրը

1. Ֆինանսական խմբերի ռեեստրը (սույն գլխում այսուհետ՝ Ռեեստր) տվյալների համակարգ է, որտեղ գրանցվում են տեղեկություններ ֆինանսական խմբերի վերաբերյալ:

2. Ռեեստրը վարում է Կենտրոնական բանկը:

3. Ռեեստրի վարման կարգը և Ռեեստրում ներառման ենթակա տեղեկատվությունների ցանկը սահմանվում են Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ:

Հոդված 39.18.Ֆինանսական խմբի պատասխանատու անձը

1. Եթե կազմակերպություններին որպես ֆինանսական խումբ որակելու որոշումը կայացվել է սույն օրենքի 39.16-րդ հոդվածի 1-ին մասում նշված դիմումի հիման վրա, ապա կազմակերպություններին որպես ֆինանսական խումբ որակելու մասին որոշման

մեջ նշվում է սույն օրենքի 39.16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ներկայացված դիմումում նշված անձը, եթե նա համապատասխանում է պատասխանատու անձին ներկայացվող չափանիշներին:

2. Եթե օրենքի 39.16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ներկայացված դիմումում նշված անձը չի համապատասխանում պատասխանատու անձին ներկայացվող չափանիշներին, կամ եթե այդ դիմումով պատասխանատու անձ նշանակելու իրավասությունը վերապահվել է Կենտրոնական բանկին, ապա պատասխանատու անձին նշանակում է Կենտրոնական բանկը:

3. Եթե կազմակերպություններին որպես ֆինանսական խումբ որակելու որոշումը կայացվել է Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքի հիման վրա, ապա կազմակերպություններին որպես ֆինանսական խումբ որակելու մասին որոշումը կայացնելուց և Ռեեստրում գրանցելուց հետո Կենտրոնական բանկն առաջարկում է ֆինանսական խմբին 15 աշխատանքային օրվա ընթացքում ընտրել պատասխանատու անձ և այդ մասին տեղեկացնել Կենտրոնական բանկին: Կենտրոնական բանկի խորհուրդը սույն մասում նշված տեղեկացումը ստանալուց հետո որոշում է կայացնում ֆինանսական խմբի պատասխանատու անձ նշանակելու մասին: Կենտրոնական բանկի՝ սույն մասում նշված առաջարկը ստանալու պահից 15 աշխատանքային օրվա ընթացքում ֆինանսական խմբի կողմից պատասխանատու անձին ներկայացվող չափանիշներին համապատասխանող պատասխանատու անձ չընտրելու դեպքում Կենտրոնական բանկի խորհուրդը նշանակում է պատասխանատու անձին:

4. Պատասխանատու անձին ներկայացվող չափանիշները սահմանվում են Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով:

5. Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ կարող է չեղյալ համարվել պատասխանատու անձի նշանակումը (անկախ այն հանգամանքից, թե պատասխանատու անձը նշանակվել էր դիմումի հիման վրա, թե Կենտրոնական բանկի նախաձեռնությամբ), եթե իր հիմնավոր կարծիքով տվյալ պատասխանատու անձը չի կարողանում կամ չի կարողանալու իրականացնել սույն օրենքով պատասխանատու անձի վրա դրված պարտականությունները:

6. Պատասխանատու անձի նշանակումը չեղյալ համարելու մասին որոշումը կայացնելու պահից 15 աշխատանքային օրվա ընթացքում ֆինանսական խումբը պետք է Կենտրոնական բանկ ներկայացնի նոր պատասխանատու անձի թեկնածությունը: Սույն մասով սահմանված ժամկետում նոր պատասխանատու անձի թեկնածությունը չներկայացնելու կամ ներկայացված թեկնածության՝ պատասխանատու անձին ներկայացվող չափանիշներին չհամապատասխանելու դեպքում նոր պատասխանատու անձին նշանակում է Կենտրոնական բանկի խորհուրդը՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում:

7. Ֆինանսական խումբը կարող է դիմել Կենտրոնական բանկ՝ պատասխանատու անձին փոփոխելու նպատակով՝ ներկայացնելով հիմնավորումներ փոփոխություն կատարելու և նշանակվող պատասխանատու անձի կողմից իր պարտականությունները արդյունավետ իրականացնելու հնարավորության վերաբերյալ: Սույն կետում նշված դիմումը Կենտրոնական բանկը քննարկում է և դրա վերաբերյալ որոշում է կայացնում դիմումը ներկայացնելու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Հոդված 39.19. Ֆինանսական խմբի կողմից տեղեկությունների հրապարակումը և տրամադրումը Կենտրոնական բանկին

1. Ֆինանսական խմբի պատասխանատու անձը պարտավոր է իր պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել ֆինանսական խմբի (ֆինանսական խմբի առանձին տեսակի, ենթախմբի) վերաբերյալ Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած հաշվետվությունները և տեղեկատվությունը:

2. Կենտրոնական բանկը կարող է իր սահմանած հաճախականությամբ պահանջել ֆինանսական խմբի (ֆինանսական խմբի առանձին տեսակի, ենթախմբի) և (կամ) ֆինանսական խմբում ներառված կազմակերպության վերաբերյալ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով նախատեսված հաշվետվություններ և այլ տեղեկություններ:

Հոդված 39.20.Ֆինանսական խմբի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները

1. Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է ֆինանսական խմբի ռիսկերը զսպելու նպատակով ֆինանսական խմբի և (կամ) ֆինանսական խմբի առանձին տեսակի և (կամ) ենթախմբի համար սահմանել հետեւյալ հիմնական տնտեսական նորմատիվները.

1) ֆինանսական խմբի (ֆինանսական խմբի առանձին տեսակի, ենթախմբի) ընդհանուր կապիտալի, ընդհանուր և հիմնական կապիտալի համարժեքության նվազագույն չափերը.

2) ֆինանսական խմբի (ֆինանսական խմբի առանձին տեսակի, ենթախմբի) մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը (չափերը).

3) ֆինանսական խմբի (ֆինանսական խմբի առանձին տեսակի, ենթախմբի) ներխմբային գործարքների գծով ռիսկերի առավելագույն չափը (չափերը): Ներխմբային գործարք է համարվում ֆինանսական խմբում ընդգրկված կազմակերպությունների միջև կամ այդ կազմակերպությունների (դրանցից մեկի) և այդ կազմակերպությունների (կամ դրանցից մեկի) հետ «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով կապված անձանց հետ գործարքները.

4) Ֆինանսական խմբի (ֆինանսական խմբի առանձին տեսակի, ենթախմբի) բոլոր՝ խմբի անդամ չհանդիսացող խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը (չափերը): Փոխառուների՝ խոշոր համարվելու չափանիշները սահմանվում են Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ.

5) իրացվելիության նորմատիվ(ներ).

6) արտարժույթի տնօրինման նորմատիվ(ներ).

7) ապահովագրական մեկ ռիսկի առավելագույն չափի նորմատիվ.

8) տեխնիկական պահուստներին համարժեք ակտիվների նորմատիվ:

2. Կենտրոնական բանկը կարող է առանձին ֆինանսական խմբի և (կամ) ֆինանսական խմբի տեսակի և (կամ) ենթախմբի համար սահմանել ավելի խիստ հիմնական տնտեսական նորմատիվներ, քան սահմանված են այլ ֆինանսական խմբերի և (կամ) ֆինանսական խմբի տեսակների և (կամ) ենթախմբերի համար, եթե տվյալ ֆինանսական խմբի և (կամ) ֆինանսական խմբի տեսակի և (կամ) ենթախմբի ֆինանսական ցուցանիշները Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով վատթարացել են, կարող են վատթարանալ, կամ ֆինանսական խումբը և (կամ) ֆինանսական խմբի տեսակը և (կամ) ենթախումբը գործունեություն է ծավալում բարձր ռիսկայնություն ունեցող ոլորտներում:

3. Սույն հոդվածի 1-ին մասում նշված հիմնական տնտեսական նորմատիվների սահմանաչափերը, հաշվարկման կարգը, հաշվարկին մասնակցող տարրերի կազմը և պարբերականությունը սահմանում է Կենտրոնական բանկի խորհուրդը:

4. Սույն հոդվածով սահմանված հիմնական տնտեսական նորմատիվների հաշվարկը Կենտրոնական բանկ է ներկայացնում պատասխանատու անձը:

Հոդված 39.21. Ֆինանսական խմբերի գործունեության իրավական կարգավորումը

1. Կենտրոնական բանկը կարող է առաջարկել ֆինանսական խմբի անդամ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալի մասնակցություն ունեցող անձին Կենտրոնական բանկի և այդ անձի փոխադարձ համաձայնությամբ որոշված ողջամիտ ժամկետում օտարել (դադարեցնել) այդ անձի մասնակցությունը ֆինանսական կազմակերպությունում, ինչպես նաև ֆինանսական խմբի անդամ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությանը օտարել (դադարեցնել) այլ կազմակերպության կանոնադրական կապիտալում իր մասնակցությունը, եթե Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով այդ մասնակցությունը կարող է ռիսկեր առաջացնել ֆինանսական խմբի կամ ֆինանսական խմբի անդամ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպության համար կամ վտանգել ֆինանսական խմբի անդամ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպության հաճախորդների կամ սպառողների շահերը կամ խոչընդոտել ֆինանսական խմբի կամ ֆինանսական խմբի անդամ կազմակերպության նկատմամբ արդյունավետ վերահսկողության իրականացմանը:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ֆինանսական խմբի անդամ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալի մասնակցություն ձեռք բերած անձի կողմից կամ ֆինանսական խմբի անդամ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպության կողմից այլ կազմակերպությունում այդ մասնակցությունը չօտարելու (չդադարեցնելու) դեպքում Կենտրոնական բանկն իրավասու է այդ մասնակցին զրկելու որոշումների կայացման ժամանակ քվեարկելու իրավունքից և այդ իրավունքը վերապահել Կենտրոնական բանկի խորհրդի նշանակած ժամանակավոր կառավարման մարմնին, որի նշանակման չափանիշները և կարգը սահմանում է Կենտրոնական բանկը:

Հոդված 39.22. Պատասխանատվությունը

1. Սույն օրենքով և ֆինանսական խմբերի գործունեությունը կարգավորող այլ իրավական ակտերով սահմանված պահանջների չկատարման դեպքում ֆինանսական խումբը պատասխանատվության է ենթարկվում պատասխանատու անձի միջոցով: Ֆինանսական խմբի նկատմամբ կիրառվում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պատասխանատվության միջոցները:»:

Հոդված 10. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
24 նոյեմբերի 2015 թ., Երևան, ՀՕ-133-Ն

«Բանկերի և բանկային գործունեության մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին[**]

Հոդված 1. «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի հունիսի 30-ի ՀՕ-68 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Բանկի՝ որպես ֆինանսական խմբի անդամի գործունեության նկատմամբ լրացուցիչ պահանջները սահմանվում են «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքով:»:

Հոդված 2. Օրենքի 8-րդ հոդվածի 1-4-րդ մասերը, 9-րդ հոդվածի 1-3-րդ մասերը, 39-րդ հոդվածի 2-րդ մասը «սույն օրենքի և բանկերի գործունեությունը կարգավորող այլ օրենքների» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև ֆինանսական խմբերի գործունեությունը կարգավորող օրենսդրության» բառերով:

Հոդված 3. Օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ժ» կետով.

«ժ) խախտվել են բանկի մասնակցությամբ ֆինանսական խմբի գործունեությունը կարգավորող օրենքների և (կամ) դրանց հիման վրա ընդունված իրավական ակտերի պահանջները:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
24 նոյեմբերի 2015 թ., Երևան, ՀՕ-134-Ն

[*] *ՀՀԱԺՏ 1996 N 12:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2015 թվականի նոյեմբերի 12-ին (ՀՀՊՏ N 77 (1166), 25.11.15):

«Վարկային կազմակերպությունների մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին[**]

Հոդված 1. «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի մայիսի 29-ի ՀՕ-359-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Վարկային կազմակերպության՝ որպես ֆինանսական խմբի անդամի գործունեության նկատմամբ լրացուցիչ պահանջները սահմանվում են «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին»[***] Հայաստանի Հանրապետության օրենքով:»:

Հոդված 2. Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը «այլ հաշվետվություններ» բառերից հետո լրացնել «և տեղեկություններ» բառերով:

Հոդված 3. Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «զ» կետով.

«զ) խախտվել են վարկային կազմակերպության մասնակցությամբ ֆինանսական խմբի գործունեությունը կարգավորող օրենքների և (կամ) դրանց հիման վրա ընդունված իրավական ակտերի պահանջները:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
24 նոյեմբերի 2015 թ., Երևան, ՀՕ-135-Ն

---

[*] *ՀՀՊՏ 2002 N 23 (198), 03.07.02:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2015 թվականի նոյեմբերի 12-ին (ՀՀՊՏ N 77 (1166), 25.11.15):
[***] *ՀՀԱԺՏ 1996 N 12:*

«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին[**]

Հոդված 1. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի ապրիլի 9-ի ՀՕ-177-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով.

«5. «Ապահովագրական, վերաապահովագրական գործունեություն իրականացնող սուբյեկտների՝ որպես ֆինանսական խմբի անդամի գործունեության նկատմամբ լրացուցիչ պահանջները սահմանվում են «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին»[***] Հայաստանի Հանրապետության օրենքով:»:

Հոդված 2. Օրենքի 143-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ կետով.

«8) խախտվել են վերահսկվողի մասնակցությամբ ֆինանսական խմբի գործունեությունը կարգավորող օրենքների և (կամ) դրանց հիման վրա ընդունված իրավական ակտերի պահանջները:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
24 նոյեմբերի 2015 թ., Երևան, ՀՕ-136-Ն

[*] *ՀՀՊՏ 2007 N 27 (551), 30.05.07:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2015 թվականի նոյեմբերի 12-ին (ՀՀՊՏ N 77 (1166), 25.11.15):
[***] *ՀՀԱԺՏ 1996 N 12:*

«Արժեթղթերի շուկայի մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին[**]

Հոդված 1. «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի հոկտեմբերի 11-ի ՀՕ-195-Ն օրենքի 28-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«4. Ներդրումային ընկերության՝ որպես ֆինանսական խմբի անդամի գործունեության նկատմամբ լրացուցիչ պահանջները սահմանվում են «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին»[***] Հայաստանի Հանրապետության օրենքով։»։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
24 նոյեմբերի 2015 թ., Երևան, ՀՕ-137-Ն

[*] *ՀՀՊՏ 2007 N 53 (577), 31.10.07։*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն։*
Ընդունված է 2015 թվականի նոյեմբերի 12-ին (ՀՀՊՏ N 77 (1166), 25.11.15)։
[***] *ՀՀԱԺՏ 1996 N 12։*

«Ներդրումային ֆոնդերի մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին[**]

Հոդված 1. «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-245-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«4. Ներդրումային ֆոնդի կառավարչի՝ որպես ֆինանսական խմբի անդամի գործունեության նկատմամբ լրացուցիչ պահանջները սահմանվում են «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին»[***] Հայաստանի Հանրապետության օրենքով:»:

Հոդված 2. Օրենքի 106-րդ հոդվածի 1-ին մասը «հարաբերությունները» բառից հետո լրացնել «, կառավարիչների մասնակցությամբ ֆինանսական խմբի գործունեությունը» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
24 նոյեմբերի 2015 թ., Երևան, ՀՕ-138-Ն

---

[*] *ՀՀՊՏ 2010 N 69[1], 30.12.10:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2015 թվականի նոյեմբերի 12-ին (ՀՀՊՏ N 77 (1166), 25.11.15):
[***] *ՀՀԱԺՏ 1996 N 12:*

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 905-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 905. Ավանդների տեսակներ

1. Բանկային ավանդի պայմանագիրը կնքվում է ավանդն առաջին իսկ պահանջով վերադարձնելու (ցպահանջ ավանդ) կամ ավանդը պայմանագրով սահմանված որոշակի ժամկետի ավարտից հետո վերադարձնելու (ժամկետային ավանդ) պայմաններով: Ժամկետային ավանդի տարատեսակ են հանդիսանում կուտակային կենսաթոշակային ավանդը և ուսումնական ավանդը.

1) կուտակային կենսաթոշակային ավանդ է համարվում այն ավանդը, որը ներդրվում է ֆիզիկական անձի համար իր կամ այլ անձի կողմից միանվագ կամ պարբերաբար, և որը, ինչպես նաև նրա վրա հաշվեգրված տոկոսները ֆիզիկական անձը կարող է ստանալ միայն օրենքով սահմանված կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո կամ օրենքով նախատեսված այլ դեպքերում.

2) ուսումնական ավանդ է համարվում այն ավանդը, որն ավանդատուն ներդնում է երրորդ անձի համար միանվագ կամ պարբերաբար, և որը, ինչպես նաև նրա վրա հաշվեգրված տոկոսները անկանխիկ վճարումներ կատարելու միջոցով երրորդ անձը կարող է օգտագործել միայն ուսումնական նպատակներով: Ուսումնական նպատակ է համարվում Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետություններում սահմանված կարգով լիցենզավորված ուսումնական հաստատությունում ուսումնառության ընթացքում ուսման վարձի (նախադպրոցական ուսումնական հաստատության վարձավճարի) վճարում իրականացնելը:

Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված նպատակներից բացի, այլ նպատակներով ուսումնական ավանդը երրորդ անձը կարող է օգտագործել միայն ավանդատուի համաձայնությամբ:

Պայմանագրով կարող են նախատեսվել ավանդները վերադարձնելու՝ օրենքին չհակասող այլ պայմաններ:

2. Ցանկացած տեսակի բանկային ավանդի պայմանագրով բանկը պարտավոր է ավանդի գումարը կամ դրա մասը վերադարձնել ավանդատուի առաջին իսկ պահանջով, բացառությամբ կուտակային կենսաթոշակային ավանդների, ուսումնական ավանդների և պայմանագրով նախատեսված՝ վերադարձման այլ պայմաններով իրավաբանական անձանց ներդրած ավանդների:

Առաջին իսկ պահանջով ավանդը հետ ստանալու քաղաքացու իրավունքը բացառող պայմանագրի պայմանն առ ոչինչ է, բացառությամբ կուտակային կենսաթոշակային ավանդների:»:

Հոդված 2. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 905.1-ին հոդվածով.

«Հոդված 905.1. Ուսումնական ավանդի տնօրինման և ժառանգման առանձնահատկությունները

1. Ուսումնական ավանդները չեն կարող գրավադրվել, արգելադրվել (դրվել արգելանքի), բռնագանձվել ավանդատուի կամ երրորդ անձի պարտավորությունների դիմաց կամ նրանց սնանկության դեպքում դառնալ պարտավորությունների կատարման համար լուծարային միջոց:

---

* *ՀՀՊՏ 1998 N 17 (50) 10.08.98:*

** *Ոչ պաշտոնական հրատարակություն:*

Ընդունված է 2015 թվականի նոյեմբերի 11-ին (ՀՀՊՏ N 77 (1166), 25.11.15):

2. Ուսումնական ավանդը կարող է գրավադրվել, արգելադրվել (դրվել արգելանքի տակ), բռնագանձվել միայն այն դեպքերում, երբ երրորդ անձի պարտավորությունները կապված են սույն օրենսգրքի 905 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ուղղություններից, դեպքերից, պայմաններից կամ գործառնություններից բխող պարտավորությունների հետ:

3. Սույն օրենսգրքի 905 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքերում ավանդատուն կամ երրորդ անձը դիմում է բանկ՝ ներկայացնելով համապատասխան ուսումնական հաստատության ուսման վարձի վճարմանն առնչվող՝ ուսումնական ավանդի պայմանագրով նախատեսված փաստաթղթերը: Բանկի՝ ուսումնական հաստատությանն անկանխիկ վճարում կատարելու կարգը սահմանվում է ուսումնական ավանդի պայմանագրով:

4. Ավանդատուի մահվան դեպքում ուսումնական ավանդը հաշվեգրված տոկոսներով ներառվում է ժառանգության զանգվածի մեջ, սակայն չի ժառանգվում սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր հիմունքներով:

5. Ուսումնական ավանդը ժառանգում է այն երրորդ անձը, հօգուտ որի ուսումնական ավանդը ներդրվել է: Ընդ որում, երրորդ անձը կարող է ուսումնական ավանդն օգտագործել միայն սույն օրենսգրքի 905 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ուսումնական նպատակներով:

6. Այն դեպքում, երբ երրորդ անձը, հօգուտ որի ուսումնական ավանդը ներդրվել է, հրաժարվում է ուսումնական ավանդն ուսումնական նպատակներով օգտագործելուց կամ չի ներկայացնում ուսումնական ավանդն ուսումնական նպատակներով օգտագործելու իր մտադրության մասին բավարար ապացույցներ, ապա ուսումնական ավանդը ժառանգվում է սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր հիմունքներով:

7. Այն դեպքերում, երբ ժառանգված ուսումնական ավանդը մասամբ օգտագործվել է ուսումնական նպատակներով, և առկա է ավանդի, ներառյալ հաշվեգրված տոկոսների մնացորդ, ապա այդ մնացորդը ժառանգվում է սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր հիմունքներով:

8. Եթե ուսումնական ավանդի ավանդատուն բացել է մանկական ավանդ և միևնույն բանկի հետ կնքում է ուսումնական ավանդի պայմանագիր՝ հօգուտ միևնույն երրորդ անձի, ապա ավանդատուի ցանկությամբ մանկական ավանդը կարող է փոփոխվել և վերակնքվել որպես ուսումնական ավանդի պայմանագիր՝ առանց պայմանագրի վաղաժամկետ լուծման համար նախատեսված բացասական հետևանքների: Սույն մասի իմաստով մանկական ավանդ է համարվում այն ավանդը, որի պայմանագիրն ավանդատուն կնքում է հօգուտ անչափահաս ֆիզիկական անձի, և որի պայմանները սահմանվում են համապատասխան պայմանագրով:»:

Հոդված 3. Օրենսգիրքը 928-րդ հոդվածից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 50.1-ին գլխով.

«ԳԼՈՒԽ 50.1

ՀԱՏՈՒԿ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ

Հոդված 928.1. Հատուկ բանկային հաշվի պայմանագրի առանձնահատկությունները

1. Հատուկ բանկային հաշիվներ են սույն գլխով նախատեսված էսքրոու հաշիվը, սոցիալական փաթեթի հաշիվը, անվանատիրոջ հաշիվը, նոտարի դեպոզիտ հաշիվը, կառուցապատողի հատուկ հաշիվը, պետական աջակցության հաշիվը, ինչպես նաև օրենքով կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կամ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով որպես հատուկ բանկային հաշիվ նախատեսված այլ բանկային հաշիվները:

2. Հատուկ բանկային հաշիվներն այն հաշիվներն են, որոնցում ներդրված միջոցները՝

1) սույն գլխով սահմանված դրույթների կամ սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված նորմատիվ իրավական ակտերի համաձայն՝ կարող են օգտագործվել միայն սույն գլխի դրույթների հիման վրա պայմանագրերով կամ նորմատիվ իրավական ակտերով սահմանված ուղղություններով, դեպքերում, պայմաններով կամ գործառնություններով, և (կամ)

2) չեն կարող գրավադրվել, արգելադրվել (դրվել արգելանքի տակ), բռնագանձվել հաճախորդի պարտավորությունների դիմաց կամ հաճախորդի սնանկության դեպքում հանդիսանալ պարտավորությունների կատարման համար լուծարային միջոց, բացառությամբ սույն գլխով նախատեսված դեպքերի:

3. Հատուկ բանկային հաշվում ներդրված միջոցները կարող են գրավադրվել, արգելադրվել (դրվել արգելանքի տակ), բռնագանձվել միայն այն դեպքերում, երբ

1) հատուկ բանկային հաշվի պայմանագրով հաճախորդ հանդիսացող անձի պարտավորությունները կապված են սույն հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված ուղղություններից, դեպքերից, պայմաններից կամ գործառնություններից բխող պարտավորությունների հետ, կամ

2) այդ միջոցները հատուկ բանկային հաշվում եղած դրամական միջոցներն օգտագործելու համար բանկի կողմից հաճախորդին վճարված տոկոսներից ձևավորված միջոցներ են, բացառությամբ նոտարի կամ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված այլ դեպքերի, կամ

3) սոցիալական փաթեթի հաշվի դեպքում՝ այդ միջոցները տվյալ հաշվում առկա ոչ պետական բյուջեի միջոցների հաշվին մուտքագրված միջոցներ են, կամ

4) էսքրոու հաշվի դեպքում՝ այդ միջոցները Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 190 հոդվածի 5-րդ կետով նախատեսված գույք են, կամ

5) էսքրոու հաշվի դեպքում՝ էսքրոու հաշվի պայմանագրի կնքման օրվանից անցել է 30 և ավելի օր, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

4. Հատուկ բանկային հաշվի պայմանագրի լուծման դեպքում տվյալ հատուկ բանկային հաշվում եղած դրամական միջոցների մնացորդը ենթակա է փոխանցման տվյալ հաճախորդի համապատասխան այլ հատուկ բանկային հաշվին կամ վերադարձման՝ համապատասխան դրամական միջոցները մուտք արած անձին, բացառությամբ պայմանագրով, այլ իրավական ակտերով և (կամ) սույն հոդվածով սահմանված դեպքերի: Հատուկ բանկային հաշվի պայմանագրով նման վերադարձ կարող է նախատեսվել նաև պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

5. Անվանատիրոջ հաշվի պայմանագրի լուծման դեպքում անվանատիրոջ հաշվում եղած դրամական միջոցների մնացորդը կարող է վերադարձվել տվյալ անվանատիրոջը, փոխանցվել տվյալ անվանատիրոջ համապատասխան այլ հատուկ բանկային հաշվին և (կամ) փոխանցվել տվյալ անվանատիրոջ մատնանշած այլ անձի, եթե այլ բան նախատեսված չէ անվանատիրոջ հաշվի պայմանագրով:

6. Նոտարի դեպոզիտ հաշվի պայմանագրի լուծման դեպքում նոտարի դեպոզիտ հաշվում եղած դրամական միջոցների մնացորդը կարող է վերադարձվել տվյալ նոտարին, փոխանցվել տվյալ նոտարի համապատասխան այլ հատուկ բանկային հաշվին և (կամ) փոխանցվել տվյալ նոտարի մատնանշած այլ անձի, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ նոտարի դեպոզիտ հաշվի պայմանագրով:

7. Պայմանագրով նախատեսված դեպքերում հաճախորդը բանկի ծառայությունների դիմաց վճարում է իր հատուկ բանկային հաշվով կատարվող գործառնությունների համար: Ընդ որում, բանկի ծառայությունների համար վճարը բանկը չի կարող վերցնել հաճախորդի հատուկ բանկային հաշվում եղած միջոցներից, բացառությամբ սույն հոդվածի 9-րդ կետով նախատեսված տոկոսների: Սույն կետով նախատեսված բացառությունը չի տարածվում նոտարի դեպոզիտ հաշիվների վրա:

8. Հաճախորդի հատուկ բանկային հաշվում եղած դրամական միջոցներն օգտագործելու համար բանկը տոկոսները վճարում է հաճախորդին, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Սույն կետով նախատեսված տոկոսների գումարը մուտքագրվում է հատուկ բանկային հաշվում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

9. Սույն հոդվածի 8-րդ կետում նշված տոկոսները բանկը վճարում է հատուկ բանկային հաշվի պայմանագրով սահմանված չափով, իսկ պայմանագրում համապատասխան պայմանի բացակայության դեպքում՝ տվյալ բանկի կողմից ցպահանջ ավանդների համար սահմանված չափով (սույն օրենսգրքի 906-րդ հոդված):

10. Տոկոսների գումարը հաշվում մուտքագրվում է պայմանագրով նախատեսված ժամկետներում, իսկ պայմանագրում նման ժամկետների բացակայության դեպքում՝

յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո, բայց ոչ ուշ, քան պայմանագրի դադարմանը հաջորդող օրը:

11. Հատուկ բանկային հաշվի միջոցների հաշվին հատուկ բանկային հաշվի տիրոջ և բանկի՝ հատուկ բանկային հաշվի տիրոջ նկատմամբ ունեցած ցանկացած հանդիպական պահանջների հաշվանց չի կարող իրականացվել, անգամ եթե հատուկ հաշիվը տվյալ բանկում հաշվի տիրոջ միակ հաշիվն է: Սույն կետով նախատեսված սահմանափակումը չի վերաբերում սույն հոդվածի 9-րդ կետով նախատեսված տոկոսներից ձևավորված միջոցների չափով հաշվանց կատարելուն, իսկ սոցիալական փաթեթի հաշվի դեպքում՝ նաև տվյալ հաշվում առկա ոչ պետական բյուջեի միջոցների հաշվին հաշվանց կատարելուն:

12. Պետական աջակցության հաշիվների կարգավորման առանձնահատկությունները սահմանվում են Կառավարության որոշմամբ:

13. Սույն օրենսգրքի 50-րդ գլխով սահմանված պահանջները տարածվում են հատուկ բանկային հաշիվների վրա այնքանով, որքանով չեն հակասում սույն գլխի դրույթներին:

Հոդված 928.2. Էսքրոու հաշվի պայմանագիրը

1. Էսքրոու հաշվի պայմանագիր է համարվում այն պայմանագիրը, որով բանկը, որպես էսքրոու գործակալ, պարտավորվում է ընդունել և որոշակի գործարքի կատարման նպատակով բացված հատուկ բանկային հաշվի վրա մուտքագրել տվյալ գործարքի իրականացման հետ կապված մուտքագրվող միջոցները եւ այդ միջոցների հետ կապված հաշվից փոխանցումներ կատարելու, համապատասխան գումարներ տալու և հաշվով այլ գործառնություններ իրականացնելու վերաբերյալ կարգադրություններն իրականացնել միայն էսքրոու հաշվին միջոցներ մուտքագրած անձի և այդ միջոցների հասցեատիրոջ միջեւ կնքված պայմանագրում կամ էսքրոու հաշվի պայմանագրում նշված դեպքերում, պայմաններով և ժամկետներում:

2. Սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված պայմանագրերով սահմանված ժամկետներում էսքրոու հաշվին միջոցներ մուտքագրած անձի և այդ միջոցների հասցեատիրոջ կողմից միմյանց նկատմամբ ստանձնած պարտավորությունների կատարումը հավաստող փաստաթուղթ չներկայացվելու դեպքում էսքրոու հաշվի միջոցները վերադարձվում են այդ միջոցները մուտքագրած անձին, իսկ վերադարձման անհնարինության դեպքում էսքրոու հաշիվը ձևակերպվում է որպես սույն օրենսգրքի 50-րդ գլխով նախատեսված բանկային հաշիվ՝ այդ հաշվին միջոցներ մուտքագրած անձի անունով:

3. Էսքրոու հաշվի պայմանագիրը կարող է հաճախորդի պահանջով վաղաժամկետ լուծվել, միայն եթե առկա է էսքրոու հաշվին միջոցներ մուտքագրած անձի և այդ միջոցների հասցեատիրոջ գրավոր համաձայնությունը, կամ եթե լուծվել է էսքրոու հաշվին միջոցներ մուտքագրած անձի և այդ միջոցների հասցեատիրոջ միջև կնքված համապատասխան պայմանագիրը, և այդ պայմանագրի լուծումից հետո անցել է ոչ պակաս, քան 10 օր, բայց ոչ ավելի, քան էսքրոու հաշվում առկա ամբողջ միջոցների դուրսգրման ժամկետը:

4. Էսքրոու հաշվում առկա միջոցները չեն կարող գրավադրվել, արգելադրվել (դրվել արգելանքի տակ), բռնագանձվել հաճախորդի պարտավորությունների դիմաց, բացառությամբ սույն օրենսգրքի 928.1 հոդվածի 3-րդ կետով նախատեսված դեպքերի:

Հոդված 928.3. Սոցիալական փաթեթի հաշվի պայմանագիրը

1. Սոցիալական փաթեթի հաշվի պայմանագիր է համարվում այն պայմանագիրը, որով բանկը պարտավորվում է ընդունել և հաճախորդի (հաշվի տիրոջ) բացած հաշվին մուտքագրել պետական մարմինների (հիմնարկների), պետական կազմակերպությունների աշխատողների և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված այլ անձանց համար որպես սոցիալական երաշխիք Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին մուտքագրվող միջոցները և հաշվից փոխանցումներ կատարելու, համապատասխան գումարներ տալու և հաշվով այլ գործառնություններ իրականացնելու վերաբերյալ հաճախորդի կարգադրություններն իրականացնել միայն օրենքով սահմանված ուղղություններով, դեպքերում, պայմաններով և գործառնությունների համար:

2. Սոցիալական փաթեթի հաշվում առկա միջոցները չեն կարող գրավադրվել, արգելադրվել (դրվել արգելանքի), բռնագանձվել հաճախորդի պարտավորությունների դիմաց, բացառությամբ սույն օրենսգրքի 928.1 հոդվածի 3-րդ կետով նախատեսված դեպքերի:

Հոդված 928.4. Անվանատիրոջ հաշվի պայմանագիրը

1. Անվանատիրոջ հաշվի պայմանագիր է համարվում այն պայմանագիրը, որով բանկը պարտավորվում է ընդունել եւ հաճախորդի (անվանատիրոջ) բացած հաշվին մուտքագրել միայն ներդրումային ծառայությունների մատուցման կամ ներդրումային ֆոնդերի կառավարման հետ կապված անվանատիրոջ ծառայությունից օգտվողի (ֆոնդի) միջոցները, կատարել հաշվից փոխանցումներ կատարելու, համապատասխան գումարներ տալու եւ հաշվով այլ գործառնություններ իրականացնելու վերաբերյալ անվանատիրոջ կարգադրությունները: Ընդ որում, անվանատիրոջ հաշիվ է այն հաշիվը, որտեղ ներդրված միջոցները սեփականության իրավունքով չեն պատկանում հաշվետիրոջը, այլ դրանք փոխանցվել են նրան սույն կետում նշված ծառայությունների մատուցման կամ կառավարման արդյունքում:

2. Անվանատիրոջ հաշիվը կարող է օգտագործվել միայն ներդրումային ծառայություններ մատուցող անձի և ներդրումային ֆոնդի կառավարչի (պահառուի) կողմից ներդրումային ծառայությունների մատուցման կամ ներդրումային ֆոնդերի կառավարման (պահառության) հետ կապված գործառնությունների իրականացման համար:

3. Անվանատիրոջ հաշվում առկա միջոցները չեն կարող գրավադրվել, արգելադրվել (դրվել արգելանքի տակ), բռնագանձվել անվանատիրոջ պարտավորությունների դիմաց կամ անվանատիրոջ սնանկության դեպքում հանդիսանալ պարտավորությունների կատարման համար լուծարային միջոց: Ընդ որում, անվանատիրոջ հաշվում առկա միջոցները սույն օրենսգրքի 928.1 հոդվածի 3-րդ կետի 1-ին ենթակետի հիմքով կարող են գրավադրվել, արգելադրվել (դրվել արգելանքի տակ), բռնագանձվել միայն անվանատիրոջ հաշվում առկա տվյալ ծառայությունից օգտվողին պատկանող միջոցների չափով:

Հոդված 928.5. Նոտարի դեպոզիտ հաշվի պայմանագիրը

1. Նոտարի դեպոզիտ հաշվի պայմանագիր է համարվում այն պայմանագիրը, որով բանկը պարտավորվում է ընդունել և հաճախորդի (նոտարի) բացած հաշվին մուտքագրել մուտքագրվող դրամական միջոցները, կատարել հաշվից փոխանցումներ կատարելու, համապատասխան գումարներ տալու և հաշվով այլ գործառնություններ իրականացնելու վերաբերյալ նոտարի կարգադրությունները:

2. Նոտարի դեպոզիտ հաշիվը կարող է օգտագործվել միայն օրենքով նախատեսված՝ նոտարի դեպոզիտ մուտքագրման ենթակա դրամական միջոցներով գործառնություններ իրականացնելու համար:

3. Նոտարի դեպոզիտ հաշվում առկա միջոցները չեն կարող գրավադրվել, արգելադրվել (դրվել արգելանքի տակ), բռնագանձվել նոտարի պարտավորությունների դիմաց: Ընդ որում, նոտարի դեպոզիտ հաշվում առկա միջոցները սույն օրենսգրքի 928.1 հոդվածի 3-րդ կետի 1-ին ենթակետի հիմքով կարող են գրավադրվել, արգելադրվել (դրվել արգելանքի տակ), բռնագանձվել միայն նոտարի դեպոզիտ հաշվում առկա տվյալ ծառայությունից օգտվողին պատկանող միջոցների չափով:

Հոդված 928.6. Կառուցապատողի հատուկ հաշիվը

1. Կառուցապատողի հատուկ հաշիվն այն բանկային հաշիվն է, որի վրա կատարվում են կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունքի պայմանագրով գնորդի՝ կառուցապատողին կանխավճարային վճարումները:

2. Կառուցապատողի հատուկ հաշիվները կարող են բացվել՝

1) գանձապետարանում.

2) Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկում.

3) նոտարի՝ գանձապետարանում կամ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկում բացված դեպոզիտային հաշվում՝ որպես ենթահաշիվ:

3. Կառուցապատողի և գնորդի միջև դրամական միջոցների գրավի պայմանագիր կնքվելու դեպքում կառուցապատողի հատուկ հաշվին գնորդի կողմից կատարվող

կանխավճարային վճարումները կառուցապատողի հատուկ հաշվին մուտք լինելու պահից համարվում են գնորդի օգտին գրավադրված՝ ի ապահովումն կառուցման ավարտից հետո շենքից անշարժ գույքը գնորդին հանձնելու՝ կառուցապատողի պարտավորության և կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունքի պայմանագրի լուծման դեպքում կանխավճարի վերադարձման՝ կառուցապատողի պարտավորության պատշաճ կատարման: Կառուցապատողի հատուկ հաշվին գնորդի կատարած կանխավճարային վճարումները հաջորդող գրավի կանոններով կարող են գրավադրվել գնորդի վարկատուի օգտին:

4. Կառուցապատողի և գնորդի միջեւ դրամական միջոցների գրավի պայմանագրով կամ դրա փոփոխություններով կարող է նախատեսվել մինչև կառուցվող շենքի շինարարության ավարտը կամ մինչեւ սեփականության իրավունքի փոխանցման ակտի կնքումը կամ մինչև շենքի շահագործման թույլտվության ստացումը կառուցապատողի հատուկ հաշվի միջոցների մի մասի գրավի իրավունքի դադարեցում, որի կիրառման դեպքերում գրավից ազատվող միջոցները փոխանցվում են կառուցապատողի այլ բանկային հաշիվներին, և կարող է տնօրինել կառուցապատողը:

5. Կառուցապատողի հատուկ հաշվի մնացորդի դիմաց հաշվեգրվող տոկոսները դրանց ստացման ժամկետը լրանալիս փոխանցվում են կառուցապատողի այլ բանկային հաշիվներին, և կարող է տնօրինել կառուցապատողը:

6. Կառուցապատողի հատուկ հաշվում առկա գրավադրված դրամական միջոցները չեն կարող արգելադրվել (կալանքի տակ վերցվել) կամ բռնագանձվել կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունքի պայմանագրից չբխող՝ կառուցապատողի որևէ պարտավորության, այդ թվում՝ պետական կամ համայնքային բյուջեի նկատմամբ կառուցապատողի ունեցած որևէ պարտավորության դիմաց:

7. ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում իրավահաջորդության կարգով կառուցապատողի իրավունքները և պարտավորությունները այլ անձանց անցնելու դեպքում (իրավաբանական անձ հանդիսացող կառուցապատողի վերակազմակերպում, ֆիզիկական անձ հանդիսացող կառուցապատողի մահ) կառուցապատողի հատուկ հաշվին գնորդի օգտին գրավադրված դրամական միջոցները կարող են անցնել միայն կառուցապատողի այն իրավահաջորդին, որին անցել են կառուցվող շենքից անշարժ գույք գնելու պայմանագրով կառուցապատողի պարտավորությունները:

Հոդված 928.7. Պետական աջակցության հաշվի պայմանագիրը

1. Պետական աջակցության հաշվի պայմանագիր է համարվում սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի և բանկի միջև կնքված պայմանագիրը, որով բանկը պարտավորվում է ընդունել և Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի բացած հաշվին մուտքագրել մուտքագրվող ընտանեկան դրամագլխի դրամական միջոցները, կատարել հաշվից փոխանցումներ կատարելու, համապատասխան գումարներ տալու և հաշվով այլ գործառնություններ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

2. Պետական աջակցության հաշվում առկա միջոցները տնօրինելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
24 նոյեմբերի 2015 թ., Երևան, ՀՕ-139-Ն

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին[**]

Հոդված 1. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-221 օրենքի 46-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ և 7-րդ մասերով.

«6. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով[***] նախատեսված հատուկ բանկային հաշիվներում առկա դրամական միջոցները չեն կարող գրավադրվել, արգելադրվել (դրվել արգելանքի տակ), բռնագանձվել հաճախորդի պարտավորությունների դիմաց, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 928.1 հոդվածի 3-րդ կետով նախատեսված դեպքերի:

7. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով նախատեսված ուսումնական ավանդներում առկա դրամական միջոցները չեն կարող գրավադրվել, արգելադրվել (դրվել արգելանքի տակ), բռնագանձվել ավանդատուի կամ հաշվետիրոջ պարտավորությունների դիմաց, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 905.1 հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
24 նոյեմբերի 2015 թ., Երևան, ՀՕ-140-Ն

[*] *ՀՀՊՏ 1998 N 12 (45), 15.06.98:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2015 թվականի նոյեմբերի 11-ին (ՀՀՊՏ N 77 (1166), 25.11.15):
[***] *ՀՀՊՏ 1998 N 17 (50), 10.08.98:*

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐՁԱԲԱՆՈՒՄՆԵՐ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Հաշվառվել են*** «ԹԵԼ-ՍԵԼ» փակ բաժնետիրական ընկերություն վճարահաշվարկային կազմակերպության «ԹԵԼ-ՍԵԼ Պլանետա» և «ԹԵԼ-ՍԵԼ Մարտունի» մասնաճյուղերի անվանափոխությունը (համապատասխանաբար՝ «Հրապարակ» և «ԹԵԼ-ՍԵԼ Արմավիր») (որոշումներ թիվ 230Ա, 239Ա):
- ***«Ռիա Մանի Թրանսֆեր» (RIA Money Transfer) արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** «Մանիտուն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն վճարահաշվարկային կազմակերպությանը և «Անելիք բանկ» փակ բաժնետիրական ընկերությանը (որոշում թիվ 232Ա, 233Ա):
- ***«Անելիք» («Anelik») առանց հաշվի բացման արտասահմանյան դրամական փոխանցումների համակարգն ընդգրկվել է*** Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գնահատված վճարահաշվարկային համակարգերի անվանացանկում (որոշում թիվ 237Ա):
- ***«Անելիք» («Anelik») արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** «ԹԵԼ-ՍԵԼ» փակ բաժնետիրական ընկերություն վճարահաշվարկային կազմակերպությանը (որոշում թիվ 238Ա):
- ***Գրավատնային գործունեության իրականացման լիցենզիա է տրամադրվել*** «ԱՍ Մաստեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 242Ա):
- ***«ԲԵՍՏ» («BEST») արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** «Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերությանը (որոշում թիվ 243Ա):
- ***Գրանցվել են*** «Ամերիաբանկ» և «Հայբիզնեսբանկ» փակ բաժնետիրական ընկերությունների համապատասխանաբար «Արշակունյաց պլյուս» և «Չարբախ» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 1/873Ա, 1/894Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 1 ապահովագրական սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, 3 գրավատների նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 3290000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/846Ա, 1/887, 1/886Ա, 1/866Ա, 1/889Ա) և 2 արտարժույթի փոխանակման կետերի, 2 ՈՒՎԿ փակ բաժնետիրական ընկերությունների ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/826Ա, 1/885Ա, 1/848Ա, 1/888Ա):

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «գ» ենթակետով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի թիվ 234Ա որոշմամբ 2015 թ. նոյեմբերի 11-ից ***ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 9.75%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպոների տոկոսադրույքը՝ 11.25%, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքը՝ 8.25%:***

*Հազար դրամ անվանական արժեքով 2015 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամները շրջանառության մեջ դնելու մասին**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «է» կետը, 41-րդ հոդվածը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. 2015 թվականի դեկտեմբերի 21-ից շրջանառության մեջ դնել հազար դրամ անվանական արժեքով 2015 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամները:

2. Սահմանել, որ հազար դրամ անվանական արժեքով 2015 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամները Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական վճարամիջոց են և ենթակա են անվերապահ ընդունման իրենց անվանական արժեքով՝ փողով արտահայտված բոլոր պարտավորությունների դիմաց, առանց ժամկետային սահմանափակումների: Հազար դրամ անվանական արժեքով 1999, 2001 և 2011 թվականների թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամները մնում են շրջանառության մեջ առանց սահմանափակումների և շրջանառության պայմանների փոփոխության:

3. Հաստատել հազար դրամ անվանական արժեքով 2015 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամի նմուշը՝ համաձայն Հավելված 1-ի:

4. Հաստատել հազար դրամ անվանական արժեքով 2015 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամի նկարագրությունը՝ համաձայն Հավելված 2-ի:

5. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հասարակայնության հետ կապերի ծառայությանը՝ հրապարակել համապատասխան հաղորդագրություն մամուլում՝ ընդգրկելով սույն որոշման Հավելված 2-ը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
26 հոկտեմբերի 2015 թ., N 216-Ն

Հավելված 1
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2015 թվականի հոկտեմբերի 21-ի թիվ 216-Ն որոշմամբ

Հազար դրամ անվանական արժեքով 2015 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամի նմուշը





* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. հոկտեմբերի 21-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2.11.2015 թ. (ՀՀԳՏ N27 (539), 16.11.2015):

Հավելված 2
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2015 թվականի հոկտեմբերի 21-ի թիվ 216-Ն որոշմամբ

Ն Կ Ա Ր Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հազար դրամ անվանական արժեքով 2015 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամի

1000 դրամ անվանական արժեքով 2015 թվականի նմուշի ՀՀ թղթադրամի չափսերն են՝ 136 x 72 մմ: Թուղթը սպիտակ է, որի վրա անզեն աչքով երևում են թելիկներ: Թղթադրամը պարունակում է Եղիշե Չարենցի դիմանկարը պատկերող բազմերանգ ջրանիշ, ինչպես նաև անվանական արժեքն արտահայտող հստակ ջրանիշ: Թղթադրամն ունի երկու պաշտպանական ներգիծ, որոնցից մեկն ամբողջությամբ ներդրված է թղթի մեջ և լուսընդդեմ դիտելիս երևում է հոծ գծի տեսքով: Մյուս պաշտպանական ներգիծը թղթադրամի դարձերեսի վրա երևում է արծաթափայլ կետագծի, իսկ լուսընդդեմ դիտելիս՝ հոծ գծի տեսքով, որի մեջ կարդացվում է «AMD 1000» մանրատառաշարը: Դիմերեսի հիմնական գույներն են՝ կանաչը և բաց վարդագույնը, իսկ դարձերեսինը՝ կանաչը և մոխրագույնը:

Դիմերես

Թղթադրամի ձախ մասում Եղիշե Չարենցի դիմանկարն է: Դիմանկարից ձախ ուղղահայաց տպված է «Եղիշե Չարենց 1897-1937», իսկ ավելի ձախ փակցված է ուղղահայաց կիսեգրամայով ժապավենաձև փայլաթիթեղ: Փայլաթիթեղի երկայնքով, պարբերաբար կրկնվելով, երևում է Եղիշե Չարենցի աջ կիսադեմը, դրամի խորհրդանշանը՝ «֏», մի զարդանախշ ու «1000» գրառումը, որոնք դիտման անկյան չնչին փոփոխման ընթացքում նույն տեղում փոխարինում են միմյանց□ Այս պատկերների միջև երևում է «1000» գրառումը, որը լույսի անկման անկյան փոփոխության դեպքում մեծանում և փոքրանում է (ZOOM էֆեկտ)□ Փայլաթիթեղի ողջ մակերեսով «AMD»և «1000» մանրատառաշարերն են, իսկ երկու եզրերի ողջ երկայնքով երևում են «AMD» ապամետաղականացված գրառումները□ Փայլաթիթեղի վրա՝ վերևի մասում, հորիզոնական տպագրված է «1000» թիվը□ Փայլաթիթեղից ձախ ուղղահայաց, կարմիր գույնով տպված են թղթադրամի սերիան և համարը՝ բաղկացած «ԱԲ» տառերից (թղթադրամի սերիան) և ութ թվերից (թղթադրամի համարը):

Դիմանկարի ներքևի ձախ անկյունում պատկերված է ձվաձև զարդանախշ, որտեղ «1000» թվի թաքնված պատկեր է, որը հայտնվում է թղթադրամն աչքի բարձրությամբ լուսընդդեմ դիտելիս՝ դիտման անկյան փոփոխության դեպքում:

Թղթադրամի վերին մասում խոր տպագրությամբ տպված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ», իսկ դրանից ներքև մանրատառաշարով՝ «ՀԱԶԱՐ ԴՐԱՄ 1000» բառերը և թիվը: Դիմանկարի աջ մասում տպված է Ե. Չարենցի բանաստեղծության «Ես իմ անուշ Հայաստանի Արևահամ բառն եմ սիրում...» բառերը՝ երկու տողով, հետին մասում երևում է Արարատ լեռը, որից ներքև ՀՀ կենտրոնական բանկի նախագահի և ՀՀ ֆինանսների նախարարի ստորագրություններն են: Թղթադրամի անվանական արժեքը տառերով գրված է ներքևի կենտրոնական մասում՝ խոր տպագրությամբ, որից աջ նշված է անվանական արժեքը թվերով՝ նույնպես խոր տպագրությամբ:

Անվանական արժեքից վերև գրչածայրի պատկերն է և թողարկման տարեթիվը՝ «2015», իսկ աջ եզրին ուղղահայաց՝ «CENTRAL BANK OF THE REPUBLIC OF ARMENIA»: Դիմանկարից աջ, վերևի կենտրոնական մասում, առկա է զարդանախշ, որը լուսընդդեմ դիտելիս մեծ ճշտությամբ համընկնում է դարձերեսի նույն զարդանախշին և կարդացվում են «ՀՀ» տառերը: Զարդանախշի եզրով տպված են մանրատառաշարով «1000 AMD» թիվը և տառերը□ Զարդանախշից աջ սև գույնով հորիզոնական տպված են թղթադրամի սերիան և համարը՝ բաղկացած «ԱԲ» տառերից (թղթադրամի սերիան) և ութ թվերից (թղթադրամի համարը):

Տկարատեսների համար վերին աջ անկյունում կա շոշափելի մեկ թեք գիծ և մեկ կետ:

Դարձերես

Հիմնական մոտիվը ներկայացնում է հին Երևանից մի պատկեր՝ երկհարկանի շենքի դիմաց կանգնած երկձի կառք: Պատկերի վերին մասում տպված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ», իսկ դրանից վերև մանրատառաշարով՝ «ՀԱԶԱՐ ԴՐԱՄ 1000» բառերը և թիվը: Թղթադրամի աջ մասում ուղղահայաց պատկերված է զարդանախշ, որի մեջ վերին մասում տպված է «1000» թիվը:

Թղթադրամի անվանական արժեքը տառերով տպագրված է ներքևի կենտրոնական մասում: Դրանից ձախ թղթադրամի անվանական արժեքը՝ «1000» թիվը տպագրված է հորիզոնական գծով՝ բաժանված մուգ մանուշակագույն և կանաչ գույներով: Վերջինիս ներքևի՝ կանաչ մասը դիտման անկյան փոփոխության դեպքում փոխում է գույնը կանաչից կարմրի և հակառակը (STEP®)□

Թղթադրամի վերևի աջ անկյունում ուղղահայաց տպագրված է «CENTRAL BANK OF THE REPUBLIC OF ARMENIA»□

Թղթադրամի մեջտեղում մարգարտափայլ ներկով տպագրված է հորիզոնական ժապավեն, որի վրա գրված են «1000» թիվը և դրամի խորհրդանշանը՝ «֏»□ Մարգարտափայլ ժապավենը լույսի անկման անկյան փոփոխության դեպքում երևում է մանուշակագույնից ոսկեգույնի փոփոխվող նրբերանգներով□

1000 դրամ անվանական արժեքով 2011 թվականի և 2015 թվականի նմուշների ՀՀ թղթադրամների տարբերությունները

2015 թվականի նմուշի վրա փոփոխության են ենթարկվել որոշ տարրեր, որոնց նկարագրությունը բերվում է ստորև□

Դիմերես

- Փոխվել է ՀՀ ֆինանսների նախարարի ստորագրությունը□
- Փոխվել է թողարկման տարեթիվը. աջ կողմում «2011» թիվը փոխարինվել է «2015» թվով□
- Թղթադրամի սերիան բաղկացած է «ԱԲ» տառերից՝ «ԱԱ»-ի փոխարեն□

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերի և վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից հայաստանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության իրականացման հատուկ կարգ և վճարահաշվարկային ծառայությունների մատուցման կանոններ, ինչպես նաև հայաստանյան վճարահաշվարկային համակարգերի կանոնների բովանդակությանը ներկայացվող պահանջ սահմանելու մասին[*]

Նպատակ ունենալով նվազեցնել և կանխարգելել ռիսկերը, որոնք կարող են վտանգել Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կայունությունը, ինչպես նաև նվազեցնել դրամական փոխանցումներ իրականացնող Հայաստանյան վճարահաշվարկային համակարգերից մեկի կողմից Հայաստանի Հանրապետությունում դրամական փոխանցումների համակարգերով ստացվող փոխանցումների մեջ գերիշխող դիրք զբաղեցնելու հնարավորությունը և դրա արդյունքում առաջացող հնարավոր բացասական հետևանքները,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածը, «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ մասը և 17-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետությունում դրամական փոխանցումների համակարգերով արտերկրից ստացված դրամական փոխանցումների ընդհանուր ծավալում յուրաքանչյուր առանձին Հայաստանյան դրամական փոխանցումների վճարահաշվարկային համակարգով (այսուհետ՝ Համակարգ) ստացված դրամական փոխանցումների մասնաբաժինը յուրաքանչյուր ամսվան նախորդող վեց ամիսների միջինացված տվյալների (այսուհետ՝ Կիսամյակային արդյունք) համաձայն չպետք է գերազանցի 30 տոկոսը: Սույն կետով սահմանված մասնաբաժնի վերաբերյալ պահանջը Համակարգի օպերատորն ապահովում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) կողմից տեղեկացման օրվանից երկու ամսվա ընթացքում՝ նվազեցնելով Կիսամյակային արդյունքը: Ընդ որում, սույն կետով սահմանված մասնաբաժինը հաշվարկում և դրա վերաբերյալ Համակարգի օպերատորին տեղեկացնում է Կենտրոնական բանկը՝ համաձայն սույն որոշման Հավելվածի:

2. Սահմանել, որ Համակարգի կանոնները պետք է պարունակեն դրույթ, սույն որոշման 1-ին կետով նախատեսված պահանջն ապահովելու համար:

3. Սահմանել, որ Համակարգի օպերատորն իր կանոններով ապահովում է Հայաստանի Հանրապետության տարածքում և Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս Համակարգով կատարվող կամ ստացվող դրամական փոխանցումների ժամանակ հաճախորդին տրամադրվող անդորրագրի վրա Համակարգի անվանման, ինչպես նաև Համակարգի նույնականացման համար անհրաժեշտ այլ տեղեկատվության առկայությունը:

4. Սահմանել, որ Համակարգի օպերատորն ապահովում է Համակարգի Մասնակիցների կողմից Համակարգով Հայաստանի Հանրապետության տարածքում և Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս իրականացվող փոխանցումների հետ կապված պրոցեսինգի և քլիրինգի գործառույթների կատարումը միայն Համակարգի օպերատորի կամ Հայաստանի Հանրապետության տարածքում պրոցեսինգ/քլիրինգ իրականացնելու իրավասություն ունեցող Համակարգի Մասնակցի կողմից՝ Համակարգի կանոններով սահմանված կարգով: Սույն որոշման համաձայն Համակարգի Մասնակից են համարվում Համակարգի օպերատորի հետ համապատասխան պայմանագիր կնքած դրամական փոխանցումների հետ կապված գործառույթներ իրականացնելու իրավասություն ունեցող անձինք, այդ թվում՝ այլ հայաստանյան և արտասահմանյան դրամական փոխանցումների համակարգերի օպերատորները:

5. Սահմանել, որ Համակարգի օպերատորն ապահովում է Հայաստանի Հանրապետության տարածքում և Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս Համակարգով իրականացվող փոխանցումների

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. հոկտեմբերի 27-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 19.11.2015 թ. (ՀՀՊՏ N28 (540), 1.12.2015):

արդյունքում Մասնակիցների միջև վերջնահաշվարկի կատարումը Համակարգի կանոններով սահմանված կարգով:

6. Սույն որոշմամբ սահմանված պահանջների խախտման համար Համակարգի օպերատորի նկատմամբ Կենտրոնական բանկի կողմից կարող են կիրառվել Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պատասխանատվության միջոցներ:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
30 հոկտեմբերի 2015 թ., N 223-Ն

Հավելված

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2015 թվականի հոկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերի և վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից հայաստանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության իրականացման հատուկ կարգ և վճարահաշվարկային ծառայությունների մատուցման կանոններ, ինչպես նաև հայաստանյան վճարահաշվարկային համակարգերի կանոնների բովանդակությանը ներկայացվող պահանջ սահմանելու մասին» թիվ 223-Ն որոշմամբ

Համակարգով ստացված փոխանցումների մասնաբաժնի չափի վերաբերյալ տեղեկացումը

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա վերջին աշխատանքային օրը տեղեկացնում է Համակարգի օպերատորին Հայաստանի Հանրապետության տարածքում Կիսամյակային արդյունքի համաձայն ստացված փոխանցումների ընդհանուր ծավալում Համակարգով ստացված փոխանցումների մասնաբաժնի չափի վերաբերյալ:

2. Սույն հավելվածով նախատեսված տեղեկացումները Կենտրոնական բանկի կողմից ուղարկվում են Համակարգի օպերատորին՝ վերջինիս կողմից հայտնած իր համար նախընտրելի ձևով: Այն դեպքում, երբ սույն կետով նախատեսված տեղեկացման ուղարկման համար նախընտրելի ձև Համակարգի օպերատորը չի հայտնում, ապա այդ տեղեկացումը ուղարկվում է վերջինիս՝ իր ինտերնետային կայքում զետեղված էլեկտրոնային փոստին:

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մայիսի 15-ի թիվ 138-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին**

Նպատակ ունենալով հստակեցնել այն վայրերի ցանկը, որտեղ լիցենզավորվող փոխանակման կետերը կարող են իրականացնել արտարժույթի առուվաճառքի գործառնություններ,

հիմք ընդունելով «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7^1-րդ հոդվածի 4-րդ մասը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը, 49-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մայիսի 15-ի «Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ը հաստատելու մասին թիվ 138-Ն որոշմամբ հաստատված «Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 10) կատարել հետևյալ լրացումները.

1) Կանոնակարգ 10-ի 13-րդ կետից հետո լրացնել նոր 13.1. կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«13.1. Մետրոպոլիտենի յուրաքանչյուր կայարանում կարող է գործել միայն մեկ փոխանակման կետ, որը կարող է բացվել և (կամ) գործունեություն իրականացնել տվյալ կայարանում այլ ֆինանսական կազմակերպության (բանկ, վարկային կազմակերպություն) բացակայության դեպքում:

Մետրոպոլիտենի կայարանում բացված փոխանակման կետը պետք է տեղակայված լինի մետրոպոլիտենի տարածքում՝ փակ նախասրահից ներս:»,

2) Կանոնակարգ 10-ի 56-րդ կետը լրացնել նոր 6-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6) մետրոպոլիտենի կայարանի տարածքում:»,

3) Կանոնակարգ 10-ի 61-րդ կետը վերջից լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Մետրոպոլիտենի կայարաններում արտարժույթի առուվաճառքի իրականացման համար արտարժույթի առուվաճառքի գործունեության իրականացման լիցենզիա կարող է ստանալ բացառապես «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն:»,

4) Կանոնակարգ 10-ի Հավելված 1-ում՝ «(երկաթուղային կայարանի տարածքում,» տողից հետո լրացնել նոր տող՝ հետևյալ բովանդակությամբ.

«(մետրոպոլիտենի կայարանի տարածքում,»

5) Կանոնակարգ 10-ի Հավելված 4-ում «երկաթուղային կայարան» բառերից հետո լրացնել «, մետրոպոլիտենի կայարան» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
30 հոկտեմբերի 2015 թ., N 224-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. հոկտեմբերի 27-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 19.11.2015 թ. (ՀՀԳՏ N28 (540), 1.12.2015):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 269-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 14-ի ««Վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների համար սահմանվող տնտեսական նորմատիվները, դրանց հաշվարկման կարգը» կանոնակարգ 17/02 հաստատելու, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մայիսի 24-ի թիվ 240-Ն և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի ապրիլի 13-ի թիվ 74-Ն որոշումների մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 269-Ն որոշմամբ հաստատված «Վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների համար սահմանվող տնտեսական նորմատիվները, դրանց հաշվարկման կարգը» կանոնակարգ 17/02-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 17/02) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումը.

1) Կանոնակարգ 17/02-ում կիրառվող բոլոր «ցպահանջ պարտավորություններ» բառակապակցությունները իրենց համապատասխան հոլովաձևերով փոխարինել «ընթացիկ պարտավորություններ» բառակապակցությունով՝ համապատասխան հոլովաձևերով,
2) Կանոնակարգ 17/02-ի 14-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«14. Ընթացիկ պարտավորությունների հաշվարկում ընդգրկվում են հաշվեկշռի «Պարտավորություններ» կարգում հաշվառվող ընթացիկ այն միջոցները (ներառյալ՝ դրանց գծով հաշվեգրված տոկոսները), որոնց վերագրման մոտեցումները նկարագրված են «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ՀՀՄՍ 1-ում, այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունները: Ընդ որում, սույն Կանոնակարգի իմաստով՝ ժամկետանց են այն պարտավորությունները, որոնք, բացառությամբ դատարանի կամ արբիտրաժային դատարանի վարույթում գտնվողների, չեն կատարվել պարտավորությամբ սահմանված ժամկետում: Դատարանի կամ արբիտրաժային դատարանի վարույթում գտնվող գործերով պարտավորությունները նույնպես համարվում են ընթացիկ:»,

3) Կանոնակարգ 17/02-ի 14.1-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,
4) Կանոնակարգ 17/02-ի 15-րդ կետի 2-րդ ենթակետից հետո լրացնել նոր 2.1 ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1) ժամկետային ավանդները, որոնց համար սահմանված է ավանդատուի կողմից ժամկետից շուտ ցանկացած պահի բանկային ավանդի պայմանագրի լուծման հնարավորություն՝ պայմանով, որ պայմանագիրը վաղաժամկետ լուծելու արդյունքում ավանդատուից տույժ և տուգանք չի գանձվելու, և որոնք չեն կարող գրավադրվել կամ հանդիսանալ որպես երաշխիքային միջոց:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
4 նոյեմբերի 2015 թ., N 227-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. նոյեմբերի 3-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 30.11.2015 թ. (ՀՀՊՏ N29 (541), 15.12.2015):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 166-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով համալրել «Ֆինանսներ բոլորի համար»՝ www.abcfinance.am ինտերնետային կայքում գործող «Ֆինանսական օգնական» համակարգը երկու նոր՝ գյուղատնտեսական վարկ և դրամական փոխանցումներ ծառայություններով,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ և 17-րդ հոդվածի 3-րդ մասերը, «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ և 6-րդ մասերը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2009 թ. հունիսի 2-ի ««Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի, կառավարիչների, կենտրոնական դեպոզիտարիայի և դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տեղեկատվությունների հրապարակումը» կանոնակարգ 8/03-ը հաստատելու մասին» թիվ 166-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի կառավարիչների, կենտրոնական դեպոզիտարիայի և դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգ 8/03-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Կանոնակարգի 30.4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«30.4. Ընկերությունները «Ֆինանսական օգնական» համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակում են իրենց կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն, ընդ որում՝

1) բանկերը և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերը հրապարակում են սպառողական, հիփոթեքային և գյուղատնտեսական վարկերի, ավանդների, վճարային քարտերի և դրամական փոխանցումների մասին տեղեկատվություն,
2) վարկային կազմակերպությունները հրապարակում են սպառողական, հիփոթեքային և գյուղատնտեսական վարկերի մասին տեղեկատվություն,
3) դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունները հրապարակում են դրամական փոխանցումների մասին տեղեկատվություն:

Համակարգում տվյալները լրացվում են սույն կանոնակարգի Հավելված 14-ով սահմանված կարգով:»:

2) Կանոնակարգի 30.5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«30.5. Համակարգն օգտագործելու և Համակարգում տվյալներ լրացնելու նպատակով ընկերություններն օգտվում են Կենտրոնական բանկի կողմից տրամադրված մուտքանունից և ծածկագրից: Ընդ որում՝ մուտքանուն և ծածկագիր ստանալու համար ընկերությունները նախապես գրությամբ Կենտրոնական բանկ են ներկայացնում Հավելված 14-ի 1-ին կետով սահմանված տեղեկատվությունը:»:

3) Կանոնակարգի 30.6-րդ կետում «ոչ ուշ, քան տվյալ պայմանի ուժի մեջ մտնելու օրը» բառերից հետո լրացնել «բացառությամբ այն դեպքերի, երբ նոր պայման (տվյալ) ավելացնելու տեխնիկածրագրային հնարավորության ապահովումը գտնվում է 30.7 կետով սահմանված գործընթացում» բառերով:

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. նոյեմբերի 3-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 30.11.2015 թ. (ՀՀԳՏ N29 (541), 15.12.2015):

4) Կանոնակարգի 30.7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«30.7. Եթե ընկերությունը ցանկանում է Համակարգում ավելացնել դրանում չնախատեսված որևէ նոր պայման (տվյալ) կամ Համակարգում առկա ծառայությունների նոր տեսակ, որոնք պահանջում են Համակարգում տեխնիկածրագրային փոփոխությունների իրականացում (օրինակ՝ լրացման նոր դաշտեր, հաշվարկման նոր բանաձևերի կիրառում և այլն), ապա վերջինիս հաստատվելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում գրություն է ուղարկում Կենտրոնական բանկ՝ տեղեկացնելով այդ մասին: Կենտրոնական բանկը 5 աշխատանքային օրվա ընթացքում ընկերությանը պատասխան գրություն է ուղարկում, որն առնվազն ներառում է Կենտրոնական բանկի՝

1) հստակ դիրքորոշումը՝ ապահովել կամ չապահովել տվյալ պայմանի (տվյալի) Համակարգում առկա ծառայությունների նոր տեսակի ավելացման տեխնիկածրագրային փոփոխությունների իրականացման հնարավորությունը,
2) դիրքորոշման պատճառաբանությունը,
3) տեխնիկածրագրային փոփոխությունների իրականացման ապահովման դեպքում վերջինիս կատարման ժամկետը՝ հիմք ընդունելով տեխնիկական հնարավորությունները:»:

5) Կանոնակարգի Հավելված 14-ի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Համակարգում գրանցվելու և Համակարգ մուտք գործելու մուտքանուն և ծածկագիր ստանալու համար ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում համակարգից օգտվելու իրավասություն ստացող երկու աշխատակիցների տվյալներ, որոնցից մեկը Համակարգում գրանցվում է որպես խմբագիր, մյուսը՝ որպես ադմինիստրատոր: Աշխատակիցների վերաբերյալ ներկայացվող տեղեկատվությունն առնվազն ներառում է աշխատակցի՝

1) անուն, ազգանունը,
2) ընկերությունում զբաղեցրած պաշտոնը,
3) էլեկտրոնային փոստի հասցեն (անհատական-կորպորատիվ, օրինակ՝ petros.petrosyan@abcbank.am),
4) հեռախոսահամարը (ներառյալ՝ ներքին համարը, եթե անհրաժեշտ է ուղիղ կապ հաստատելու համար):

Սույն կետում նշված աշխատակիցների կամ նրանց վերաբերյալ տվյալների փոփոխության (այդ թվում նաև ժամանակավոր փոփոխության, օրինակ՝ աշխատակցի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում նրան ժամանակավոր փոխարինող նշանակվելու) դեպքում ընկերությունը նոր տվյալները ներկայացնում է Կենտրոնական բանկ երկու աշխատանքային օրվա ընթացում: Աշխատակիցների փոփոխության դեպքում Կենտրոնական բանկի կողմից տրվում է Համակարգ մուտք գործելու նոր մուտքանուն և ծածկագիր՝ չեղարկելով նախորդ մուտքանունը և ծածկագիրը:»:

6) Կանոնակարգի Հավելված 14-ը լրացնել նոր 1.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1. Կենտրոնական բանկի կողմից Համակարգ մուտք գործելու համար ընկերությունների աշխատակիցներին տրվող մուտքանունը և ծածկագիրը համարվում են գաղտնի և անհատական օգտագործման տեղեկատվություն:»:

7) Կանոնակարգի Հավելված 14-ը լրացնել նոր 9.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«9.1. Արդեն մուտքագրված ծառայությունը ջնջելու, ժամանակավորապես Համակարգում պասիվացնելու կամ պասիվացված ծառայությունն ակտիվացնելու համար խմբագիրը՝

1) մուտք է գործում համակարգ,
2) առկա լրացված ծառայությունների աղյուսակում սեղմում է տվյալ ծառայության համապատասխան աբար «Ջնջել», «Պասիվացնել» կամ «Ակտիվացնել» կոճակը,
3) ծառայությունը ջնջելու, պասիվացնելու կամ ակտիվացնելու հայտն ուղարկվում է ադմինիստրատորին հաստատման կամ միանգամից հաստատվում է խմբագրի կողմից՝ սույն ուղեցույցի 8-րդ կետի համաձայն:»:

8) Կանոնակարգի Հավելված 14-ը լրացնել նոր 11.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«11.1. Ադմինիստրատորը խմբագրի կողմից մուտքագրված ծառայությունները ջնջելու, ակտիվացնելու կամ պասիվացնելու հայտերը դիտարկելու համար՝

1) մուտք է գործում համակարգ,
2) ծառայությանը ծանոթանալուց հետո սեղմում «Հաստատել» կոճակը՝ դրանք վերջնական ջնջելու, ակտիվացնելու կամ պասիվացնելու համար,
3) անհրաժեշտության դեպքում ադմինիստրատորը կարող է մերժել ուղարկված հայտերը՝ սեղմելով «Մերժել» կոճակը:»:

9) Կանոնակարգի Հավելված 14-ի 17-րդ կետի աղյուսակը լրացնել նոր 13-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

13	Բանկոմատների ցուցակ	Լրացվում են Բանկոմատների անվանումները ու հասցեները՝ «Կցել» կոճակի միջոցով բեռնելով էքս էմ էլ ձևաչափի ֆայլը (անհրաժեշտ էքս էմ էլ ձևաչափի ֆայլի ներկայացուցչական օրինակին հնարավոր է ծանոթանալ՝ «Բեռնել» կոճակի միջոցով ներբեռնելով համապատասխան փաստաթուղթը):

10) Կանոնակարգի Հավելված 14-ը լրացնել նոր 18 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.
«18. Դրամական փոխանցումներ

	Դաշտեր	Լրացման կանոններ
1	Ծառայության անվանումը (տեսանելի չէ օգտագործողի համար)	Մուտքագրվում է կազմակերպության կողմից ծառայության անվանումը Օրինակ՝ X համակարգով փոխանցում եվրոպական երկրներ....
2	Փոխանցման տարբերակը	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով:
3	Համակարգի անվանումը	Ընտրվում է առաջարկվող տարբերակներից որևէ մեկը կամ մի քանիսը միաժամանակ («Multiple choice» սկզբունքով):
4	Ստացող կողմ	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով:
5	Ցանկ	Ընտրվում է առաջարկվող տարբերակներից որևէ մեկը կամ մի քանիսը միաժամանակ («Multiple choice» սկզբունքով):
6	Ստացող բանկը	Ընտրվում է առաջարկվող տարբերակներից որևէ մեկը կամ մի քանիսը միաժամանակ («Multiple choice» սկզբունքով):
7	Փոխանցվող գումարի արժույթ	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով:
8	Փոխանցվող գումար	Լրացվում են փոխանցվող գումարի առավելագույն և նվազագույն արժեքները՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ Սկսած 10000 Մինչև 5000000 Փոխանցվող գումարի նվազագույն արժեք սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0», իսկ առավելագույն արժեք սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում ոչինչ չի լրացվում:
9	Փոխանցման տևողություն	Լրացվում են փոխանցման առավելագույն և նվազագույն ժամկետները՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ Սկսած 1 Մինչև 48 և միաժամանակ Թափվող ցուցակի համապատասխան տարբերակի ընտրություն: Փոխանցման նվազագույն ժամկետ սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0»:

10	Փոխանցման միջնորդավճար/ սակագին	Վճարը կարող է լրացվել 1) որպես տոկոս փոխանցվող գումարի նկատմամբ թվերի և տոկոսի սիմվոլի մուտքագրմամբ (%): Օրինակ՝ 2 % միաժամանակ 2) որպես բացարձակ գումար (ֆիքսված)՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Ընդ որում՝ • ՀՀ դրամով սահմանված լինելու դեպքում «ՀՀ դրամ» գրվածքի համապատասխան վանդակում դրվում է նշում, • Փոխանցվող գումարի արժույթով սահմանված լինելու դեպքում տվյալ նշումը չի դրվում: Օրինակ՝ 1000 Միևնույն ժամանակ վճարի առավելագույն և նվազագույն արժեքների առկայության դեպքում վերջիններս լրացվում են միայն թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների). Օրինակ՝ Նվազագույնը՝ 10000 Առավելագույնը՝ 40000 Ընդ որում՝ նվազագույն ու առավելագույն շեմերը. • ՀՀ դրամով սահմանված լինելու դեպքում «ՀՀ դրամ» գրվածքի համապատասխան վանդակում դրվում է նշում, • Փոխանցվող գումարի արժույթով սահմանված լինելու դեպքում տվյալ նշումը չի դրվում: Փոխանցման միջնորդավճարի նվազագույն արժեք սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0», իսկ առավելագույն արժեք սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում ոչինչ չի լրացվում:
11	Ավելացնել (գումարման նշան)	Փոխանցվող գումարի սահմանաչափերի և միջնորդավճարների նոր աղյուսակ բացելու համար սեղմվում է կոճակը:
12	Կրկնօրինակել (փաստաթղթերի նշան)	Փոխանցվող գումարի սահմանաչափերի և միջնորդավճարների աղյուսակի լրացված տարբերակի կրկնօրինակը բացելու համար սեղմվում է կոճակը:
13	Ջնջել (հանման նշան)	Փոխանցվող գումարի սահմանաչափերի և միջնորդավճարների աղյուսակը ջնջելու համար սեղմվում է կոճակը:
14	Անհրաժեշտ փաստաթղթեր	Մուտքագրվում է կազմակերպության կողմից փոխանցողից պահանջող փաստաթղթերի ցանկը: Օրինակ՝ Անձնագիր, ... Ընդ որում՝ բոլոր տվյալները լրացվում են «Յունիկոդ» տառատեսակով:
15	Լրացուցիչ տեղեկություններ	Լրացվում է՝ 1. տեղեկատվություն սակագների վրա ազդեցություն ունեցող չափանիշների վերաբերյալ՝ առկայության դեպքում, 2. տեղեկատվություն տվյալ ծառայությանն առնչվող և սպառողի ընտրության վրա էական ազդեցություն ունեցող այլ տվյալների/ պայմանների վերաբերյալ (հատուկ առաջարկներ, զեղչեր և այլն): Ընդ որում՝ բոլոր տվյալները լրացվում են «Յունիկոդ» տառատեսակով, 8 տառաչափով, միանման ձևաչափով: Ծառայության վերաբերյալ կարևոր տեղեկատվությունը ներկայացվում է աչքի ընկնող ձևով՝ տեսքը ընդգծելու, շեղ կամ մգեցված տառերով մուտքագրելու միջոցով:

»:

11) Կանոնակարգի Հավելված 14-ը լրացնել նոր 19 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«19. Գյուղատնտեսական վարկեր

	Դաշտեր	Լրացման կանոններ
1	Վարկի անվանումը (տեսանելի չէ սպառողների համար)	Ինքնուրույն մուտքագրվում է կազմակերպության կողմից վարկի տվյալ տեսակին տրված անվանումը: Օրինակ՝ աբգ
2	Վարկի նպատակը	Ընտրվում է առաջարկվող տարբերակներից որևէ մեկը կամ մի քանիսը միաժամանակ («Multiple choice» սկզբունքով):
3	Գրավի տեսակը	Ընտրվում է առաջարկվող տարբերակներից որևէ մեկը կամ մի քանիսը միաժամանակ («Multiple choice» սկզբունքով):
4	Վարկի գումարը	Լրացվում են Վարկի գումարի առավելագույն և նվազագույն արժեքները թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ Սկսած 3000000 Մինչև 30000000 Վարկի նվազագույն արժեք սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0», իսկ առավելագույն արժեք սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում ոչինչ չի լրացվում:
5	Վարկի արժույթը	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով:
6	Վարկի ժամկետը (ամիսներ)	Լրացվում են վարկի առավելագույն և նվազագույն ժամկետներն ամիսներով՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ Սկսած 12 Մինչև 120 Վարկի նվազագույն ժամկետ սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0», իսկ առավելագույն ժամկետ սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում ոչինչ չի լրացվում:
7	Մարումների ձևը	Ընտրվում է առաջարկվող տարբերակներից որևէ մեկը կամ մի քանիսը միաժամանակ («Multiple choice» սկզբունքով):
8	Վարկի տրամադրման եղանակը	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով:
9	Վարկի տոկոսադրույքի տեսակը	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով:
10	Վարկի անվանական տոկոսադրույքը	Լրացվում է վարկի տոկոսադրույքը թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների, տոկոսադրույքի (%) կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ ֆիքսված տոկոսադրույքի դեպքում 12 Օրինակ՝ փոփոխվողի դեպքում 10+5 Տվյալ վարկատեսակի համար տոկոսադրույքների միջակայքի առկայության դեպքում լրացվում է տվյալ միջակայքի առավելագույն արժեքը: Ընդ որում՝ սույն կետի «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում լրացվում է տեղեկատվություն այն չափանիշների վերաբերյալ, որոնք բավարարելու դեպքում հաճախորդի հետ պայմանագիր կկնքվի ավելի ցածր տոկոսադրույքով՝ նման չափանիշների առկայության դեպքում (օրինակ՝ 150 000 դրամ և ավելի աշխատավարձի առկայության և ժամկետանց վարկերի բացակայության դեպքում վարկի տոկոսադրույքը կսահմանվի 17 տոկոս):

11	Վարկային հայտի ուսումնասիրության վճարը (միանվագ)	Տվյալ վճարը կարող է լրացվել՝ 1) որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ)՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ 1000 2) որպես տոկոս վարկի մայր գումարի նկատմամբ՝ վճարի առավելագույն և նվազագույն սահմանափակումների մուտքագրման հնարավորությամբ: Վճարի չափը լրացվում է թվերի և տոկոսադրույքի սիմվոլի (%) մուտքագրման միջոցով, իսկ առավելագույն և նվազագույն արժեքների առկայության դեպքում վերջիններս լրացվում են միայն թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): 5% Օրինակ՝ Նվազագույնը՝ 10000 Առավելագույնը՝ 40000 Ընդ որում՝ վարկի տրամադրման ժամանակ միանվագ գանձվող ցանկացած նմանատիպ վճար, բացառությամբ գրավի ձևակերպման, գնահատման և ապահովագրության վճարների, անկախ անվանումից, լրացվում է որպես «Վարկային հայտի ուսումնասիրության վճար»:
12	Վարկի սպասարկման վճարը (տարեկան)	Վճարը կարող է լրացվել՝ 1) որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ)՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ 15000 2) կամ որպես տոկոս ա. վարկի մայր գումարի կամ բ. վարկի մնացորդի նկատմամբ, թվերի և տոկոսադրույքի սիմվոլի (%) մուտքագրման և թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող վերոնշյալ 2 տարբերակներից որևէ մեկի ընտրության միջոցով: Օրինակ՝ 5 % և միաժամանակ Թափվող ցուցակի համապատասխան տարբերակի ընտրություն: Ընդ որում՝ տարեկան պարբերականությամբ գանձվող ցանկացած նմանատիպ վճար, բացառությամբ գրավի ձևակերպման, գնահատման և ապահովագրության վճարների, անկախ անվանումից, լրացվում է որպես «Վարկի սպասարկման վճար»: Եթե վարկի սպասարկման վճարը գանձվում է այլ պարբերականությամբ, ապա լրացվում է 1 տարվա կտրվածքով գանձման ենթակա վճարների չափը:
13	1) Գրավի գնահատման վճար 2) Նոտարական վավերացման վճար 3) Գրավի պետական գրանցման հետ կապված վճար	Այս վճարները կարող են լրացվել՝ 1) որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ)՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ 15000 2) որպես տոկոս վարկի մայր գումարի նկատմամբ՝ թվերի և տոկոսադրույքի սիմվոլի (%) մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ 5 % Միջնորդավճարների գծով միջակայքի առկայության դեպքում լրացվում է տվյալ միջակայքի առավելագույն արժեքը: Ընդ որում՝ սույն կետի «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում լրացվում է տեղեկատվություն այն չափանիշների վերաբերյալ, որոնք բավարարելու դեպքում հաճախորդի հետ պայմանագիր կնքելիս կսահմանվի միջնորդավճարի առավել ցածր արժեք՝ նման չափանիշների առկայության դեպքում:

14	Գրավի ապահովագրության վճար (տարեկան)	Այս վճարը կարող է լրացվել՝ 1) որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ)՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ 15000 2) կամ որպես տոկոս ա. Վարկի մայր գումարի, բ. Վարկի մնացորդի, գ. Վարկի մնացորդ + տոկոսագումարների կամ դ. Գույքի արժեքի նկատմամբ՝ թվերի և տոկոսադրույքի սիմվոլի (%) մուտքագրման և թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող վերոնշյալ 4 տարբերակներից որևէ մեկի ընտրության միջոցով: Օրինակ՝ Տոկոս վարկի մայր գումարի նկատմամբ 5 % և միաժամանակ թափվող ցուցակի համապատասխան տարբերակի ընտրություն Ապահովագրության վճարի գծով միջակայքի առկայության դեպքում լրացվում է տվյալ միջակայքի առավելագույն արժեքը: Ընդ որում՝ սույն կետի «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում լրացվում է տեղեկատվություն այն չափանիշների վերաբերյալ, որոնք բավարարելու դեպքում հաճախորդի հետ պայմանագիր կնքելիս կսահմանվի ապահովագրության վճարի առավել ցածր արժեք՝ նման չափանիշների առկայության դեպքում: Եթե ապահովագրության վճարը գանձվում է այլ պարբերականությամբ, ապա լրացվում է 1 տարվա ընթացքում գանձման ենթակա վճարների չափը:
15	Գրավի պահպանման վճար (միանվագ)	Լրացվում է որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ)՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների և այլ սիմվոլների):
16	Վարկ/գրավ հարաբերակցություն	Լրացվում է Վարկ/գրավ նվազագույն հարաբերակցությունը թվերի մուտքագրման միջոցով: Օրինակ՝ 70
17	1) Կանխիկացման վճար բանկի բանկոմատներում 2) Կանխիկացման վճար այլ բանկի բանկոմատներում 3) Կանխիկացման վճար արտասահմանում	Վճարները լրացվում են թվերի և տոկոսադրույքի նշանի (%) մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ 1% Կանխիկացման վճարներ սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտերում լրացվում է «0»:
18	Այլ միջնորդավճարներ	Տվյալ ծառայության համար այլ միջնորդավճարի առկայության դեպքում լրացվում է վերջինիս անվանումը, ընտրվում է վճարի գանձման պարբերականությունը՝ թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով և մուտքագրվում է վճարի չափը՝ որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ) կամ որպես տոկոս վարկի մայր գումարի նկատմամբ: Օրինակ՝ Անվանում Վճար 1 Պարբերականություն միանվագ Գումար 15000

		Այլ միջնորդավճարների գծով միջակայքի առկայության դեպքում լրացվում է տվյալ միջակայքի առավելագույն արժեքը: Ընդ որում՝ սույն կետի «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում լրացվում է տեղեկատվություն այն չափանիշների վերաբերյալ, որոնք բավարարելու դեպքում հաճախորդի հետ պայմանագիր կնքելիս կսահմանվի այլ միջնորդավճարների առավել ցածր արժեք՝ նման չափանիշների առկայության դեպքում:
19	Լրացուցիչ տեղեկություններ	Լրացվում է՝ 1. տեղեկատվություն սակագների (անվանական տոկոսադրույք և միջնորդավճարներ) վրա ազդեցություն ունեցող չափանիշների վերաբերյալ՝ առկայության դեպքում, 2. տեղեկատվություն տվյալ ծառայությանն առնչվող և սպառողի ընտրության վրա էական ազդեցություն ունեցող այլ տվյալների/պայմանների վերաբերյալ (հատուկ առաջարկներ, զեղչեր և այլն): Ընդ որում՝ Բոլոր տվյալները լրացվում են «Յունիկոդ» տառատեսակով, 8 տառաչափով, միանման ձևաչափով: Ծառայության վերաբերյալ կարևոր տեղեկատվությունը ներկայացվում է աչքի ընկնող ձևով՝ տեսքը ընդգծելու, շեղ կամ մգեցված տառերով մուտքագրելու միջոցով:

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
4 նոյեմբերի 2015 թ., N 229-Ն

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով մեղմացնել Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի կողմից ներգրավված միջոցների դիմաց պարտադիր պահուստավորման ընթացակարգը,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 51-րդ հոդվածը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ժթ» կետը, 36-րդ հոդվածի 1-ին մասը, 37-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի ««Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ը հաստատելու մասին» թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 2) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնակարգ 2-ի 24.1 կետից 24.1.4 կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«24.1. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի և օտարերկրյա բանկերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերի կողմից արտարժույթով, ինչպես նաև առարկայազուրկ մետաղական հաշիվներով (այսուհետ՝ մետաղական հաշիվ) ներգրավված միջոցների դիմաց Կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստների նվազագույն չափը սահմանվում է ներգրավված միջոցների 20 տոկոսի չափով՝ բացառությամբ սույն կանոնակարգի 24.1.2, 24.1.3, 24.1.4 և 24.1.5 կետերով սահմանված դեպքերի:

24.1.1. Սույն կանոնակարգի Հավելված 11-ի 1.2 կամ 1.4 կետերի պահանջները բավարարող պարտատոմսերով և Հավելված 11-ի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված Հայաստանի Հանրապետության դրամով ներգրավված միջոցների դիմաց Կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստների նվազագույն չափը սահմանվում է 0 տոկոսի չափով:

24.1.2. Սույն կանոնակարգի Հավելված 11-ի 1.1 և 1.2 կետերի պահանջները միաժամանակ բավարարող պարտատոմսերով արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց Կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստների նվազագույն չափը սահմանվում է 0 տոկոսի չափով:

24.1.3. Սույն կանոնակարգի Հավելված 11-ի 1.3 կամ 1.1 և 1.5 կետերի պահանջները միաժամանակ բավարարող՝ պարտատոմսերով և Հավելված 11-ի 3-րդ կետով սահմանված արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց Կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստների նվազագույն չափը սահմանվում է սույն կանոնակարգի 24.1 կետով սահմանված դրույքաչափի մեկ ութերորդի չափով:

24.1.4. Սույն կանոնակարգի Հավելված 11-ի 1.2 կամ 1.5 կետերի պահանջը կամ 1.1 և 1.4 կետերի պահանջները միաժամանակ բավարարող պարտատոմսերով և Հավելված 11-ի 2-րդ կետով սահմանված արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց Կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստների նվազագույն չափը սահմանվում է սույն կանոնակարգի 24.1 կետով սահմանված դրույքաչափի մեկ չորրորդի չափով:»:

2) Կանոնակարգ 2-ը լրացնել նոր 24.1.5 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«24.1.5. Սույն կանոնակարգի Հավելված 11-ի 1.4 կետի պահանջները բավարարող պարտատոմսերով արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց Կենտրոնական բանկում տեղաբաշխվող պար-

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. նոյեմբերի 10-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 26.11.2015 թ. (ՀՀԳՏ N29 (541), 15.12.2015):

տադիր պահուստների նվազագույն չափը սահմանվում է 24.1 կետով սահմանված դրույքաչափի մեկ երկրորդի չափով:»:

3) Կանոնակարգ 2-ի 53.1 և 53.4 կետերում «24.1.1-ից 24.1.4 կետերով» բառերը փոխարինել «24.1.1-ից 24.1.5 կետերով» բառերով:
4) Կանոնակարգ 2-ի Հավելված 11-ը խմբագրել հետևյալ բովանդակությամբ.

«Հավելված 11
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի
թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության
կարգավորումը, բանկային գործունեության հիմնական
տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի

ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀՈՒՍՏԱՎՈՐՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄ ՆՎԱԶԵՑՎԱԾ ԴՐՈՒՅՔԱՉԱՓՈՎ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի և օտարերկրյա բանկերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերի կողմից թողարկված պարտատոմսերով (պարտքային արժեթղթերով) ներգրավված միջոցները պարտադիր պահուստավորման նորմատիվի հաշվարկում նվազեցված դրույքաչափով ընդգրկելու պայմաններ.

1.1. Բանկը տիրապետում է պարտատոմսերի սեփականատերերի վերաբերյալ արժանահավատ ու թարմացվող տեղեկատվության, որի համաձայն պարտատոմսերի շրջանառվող ծավալի առնվազն 50 տոկոսը պատկանում է բանկի բաժնետերերից և բանկի հետ կապված անձանցից տարբերվող այլ անձանց,

1.2. Պարտատոմսերը թույլատրվել են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 68 Ն որոշմամբ հաստատված «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04-ի Հավելված 3-ով սահմանված Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործող կարգավորվող շուկաներում առևտրին, ընդ որում՝ թողարկվել են բանկի կողմից կամ թողարկման նպատակով ստեղծված կազմակերպության կողմից՝ այդ կազմակերպության կողմից բանկին տրամադրված փոխառության ապահովությամբ, պարտատոմսերի տեղաբաշխման պահից մինչև մարումն ընկած ժամկետը փոքր չէ 2 տարուց, և պարտատոմսերի գծով մայր գումարի մասնակի մարումներ չեն նախատեսվում տեղաբաշխման օրվան հաջորդող մեկ տարվա ընթացքում,

1.3. Պարտատոմսերը թույլատրվել են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 68-Ն որոշմամբ հաստատված «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04-ի Հավելված 3-ով սահմանված Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործող կարգավորվող շուկաներում առևտրին, ընդ որում՝ թողարկվել են բանկի կողմից կամ թողարկման նպատակով ստեղծված կազմակերպության կողմից՝ այդ կազմակերպության կողմից բանկին տրամադրված փոխառության ապահովությամբ, պարտատոմսերի տեղաբաշխման պահից մինչև մարումն ընկած ժամկետը փոքր չէ 4 տարուց, և պարտատոմսերի գծով մայր գումարի մասնակի մարումներ չեն նախատեսվում:

1.4. Պարտատոմսերը թույլատրվել են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կարգավորվող շուկայում առևտրին և բավարարում են հետևյալ բոլոր պայմանները՝

ա. տեղաբաշխման պահից մինչև մարում ընկած ժամկետը փոքր չէ 2 տարուց,

բ. պարտատոմսը զեղչատոկոսային է կամ արժեկտրոնային՝ ֆիքսված կամ լողացող տոկոսադրույքով, չի պարունակում մասնակի մարումներ կամ ժամկետից շուտ մարելու (հետ գնելու) որևէ օպցիոն,

գ. պարտատոմսի մարման և մարման կատարման (վճարման) ամսաթվերը, ինչպես նաև արժեկտրոնի մարման և արժեկտրոնների վճարման ամսաթվերը (յուրաքանչյուր ժամկետի համար) տարբեր չեն,

դ. արժեկտրոնային տոկոսադրույքը հանդիսանում է անվանական տոկոսադրույք և բացասական մեծություն չէ,

ե. արժեկտրոնների վճարման ժամանակահատվածները կանոնավոր են, արժեկտրոնի վճարումն իրականացվում է տարեկան, կիսամյակային, եռամսյակային կամ ամսական պարբերականությամբ,

զ. օրերի հաշվարկման պայմանականությունը ընտրվում է հետևյալ տարբերակներից մեկով՝ փաստացի/365, փաստացի/փաստացի, փաստացի/360 կամ 30/360,

է. լողացող տոկոսադրույքով պարտատոմսի դեպքում հղման դրույքը բավարարում է հետևյալ պայմանները՝ թափանցիկ, հրապարակված, անընդհատ, վստահելի և մատչելի շուկայի մասնակիցների համար,

ը. լողացող տոկոսադրույքով պարտատոմսի օրերի հաշվարկման պայմանականությունը և արժեկտրոնի հղման դրույքի օրերի հաշվարկման պայմանականությունը նույնն է,

թ. լողացող արժեկտրոնով պարտատոմսի արժեկտրոնի սահմանման նպատակով հղման դրույքին գումարվող մեծությունը՝ հղման դրույքի մարժան (Reset Margin), հանդիսանում է հաստատուն անվանական մեծություն:

1.5. Պարտատոմսերը թույլատրվել են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կարգավորվող շուկայում առևտրին և բավարարում են հետևյալ բոլոր պայմանները՝

ա. տեղաբաշխման պահից մինչև մարումն ընկած ժամկետը փոքր չէ 4 տարուց,

բ. պարտատոմսը զեղչատոկոսային է կամ արժեկտրոնային՝ ֆիքսված կամ լողացող տոկոսադրույքով, չի պարունակում մասնակի մարումներ կամ ժամկետից շուտ մարելու (հետ գնելու) որևէ օպցիոն,

գ. պարտատոմսի մարման և մարման կատարման (վճարման) ամսաթվերը, ինչպես նաև արժեկտրոնի մարման և արժեկտրոնների վճարման ամսաթվերը (յուրաքանչյուր ժամկետի համար) տարբեր չեն,

դ. արժեկտրոնային տոկոսադրույքը հանդիսանում է անվանական տոկոսադրույք և բացասական մեծություն չէ,

ե. արժեկտրոնների վճարման ժամանակահատվածները կանոնավոր են, արժեկտրոնի վճարումն իրականացվում է տարեկան, կիսամյակային, եռամսյակային կամ ամսական պարբերականությամբ,

զ. օրերի հաշվարկման պայմանականությունն ընտրվում է հետևյալ տարբերակներից մեկով՝ փաստացի/365, փաստացի/փաստացի, փաստացի/360 կամ 30/360,

է. լողացող տոկոսադրույքով պարտատոմսի դեպքում հղման դրույքը բավարարում է հետևյալ պայմանները՝ թափանցիկ, հրապարակված, անընդհատ, վստահելի և մատչելի շուկայի մասնակիցների համար,

ը. լողացող տոկոսադրույքով պարտատոմսի օրերի հաշվարկման պայմանականությունը և արժեկտրոնի հղման դրույքի օրերի հաշվարկման պայմանականությունը նույնն է,

թ. լողացող արժեկտրոնով պարտատոմսի արժեկտրոնի սահմանման նպատակով հղման դրույքին գումարվող մեծությունը՝ հղման դրույքի մարժան (Reset Margin), հանդիսանում է հաստատուն անվանական մեծություն:

2. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի և օտարերկրյա բանկերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերի կողմից «Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ (փակագծում՝ Մուդիզ) վարկանշային գործակալությունների կողմից տրամադրված երկարաժամկետ միջոցների ներգրավման Ա-(Ա3) և բարձր վարկանիշ ունեցող բանկերից, բանկի կանոնադրական կապիտալում 50% և ավելի մասնակցություն ունեցող մայր բանկից Հայաստանի Հանրապետության դրամով և առաջին խմբի արտարժույթներով, բանկի կանոնադրական կապիտալում 50% և ավելի մասնակցություն ունեցող բանկային խմբի հոլդինգային կազմակերպությունից կամ խմբի անդամ բանկերից Հայաստանի Հանրապետության դրամով և առաջին խմբի արտարժույթներով, սույն կանոնակարգի Հավելված 3-ի Աղյուսակ 1-ի 6.6 կետով սահմանված կազմակերպություններից, Գերմանահայկական հիմնադրամից, Եվրասիական զարգացման բանկից, Նավթ Արտահանող Երկրների Կազմակերպության Միջազգային զարգացման հիմնադրամից (OPEC Fund for International Development), Հարավարևելյան Եվրոպայի Եվրոպական հիմնադրամից (European Fund for Southeast Europe), Արտասահմանյան Մասնավոր Ներդրումների Կորպորացիայից (Overseas Private Investment Corporation), Կանաչը աճի համար հիմնադրամից (Green for Growth Fund), Զարգացման Եվրոպական Ֆինանսական Ինստիտուտների Ասոցիացիայի (Association European Development Finance Institutions) անդամ ֆինանսական կազմակերպություններից, «Ռեսփոնսաբիլիթի Ինվեսթմենթս էյ-ջի»-ից (responsAbility Investments AG), Միկրոֆինանսավորման ընդլայնման հաստատությունից (Microfinance Enhancement Facility S.A.), Տրիոդոս Բանկ Վի-էն-ից (Triodos Bank VN), «էյ-Սի-Թի-Այ-էյ-էմ»-ից (ACTIAM) ներգրավված միջոցները պարտադիր պահուստավորման նորմատիվի հաշվարկում ենթակա են նվազեցված դրույքաչափով ընդգրկման, եթե ներգրավված միջոցի ներգրավման պահից մինչև մարումն ընկած ժամկետը փոքր չէ 2 տարուց: Սույն կետով սահմանված բանկի՝ վարկանիշ չունենալու դեպքում հաշվի է առնվում տվյալ բանկի գործունեության նկատմամբ հսկողության հնարավորություն ունեցող անձի վարկանիշը:

3. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի և օտարերկրյա բանկերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերի կողմից «Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ (փակագծում՝ Մուդիզ) վարկանշային գործակալությունների կողմից տրամադրված երկարաժամկետ միջոցների ներգրավման Ա-(A3) և բարձր վարկանիշ ունեցող բանկերից, բանկի կանոնադրական կապիտալում 50% և ավելի մասնակցություն ունեցող մայր բանկից Հայաստանի Հանրապետության դրամով և առաջին խմբի արտարժույթներով, բանկի կանոնադրական կապիտալում 50% և ավելի մասնակցություն ունեցող բանկային խմբի հոլդինգային կազմակերպությունից կամ խմբի անդամ բանկերից Հայաստանի Հանրապետության դրամով և առաջին խմբի արտարժույթներով, սույն կանոնակարգի Հավելված 3-ի Աղյուսակ 1-ի 6.6 կետով սահմանված կազմակերպություններից, Գերմանահայկական հիմնադրամից, Եվրասիական զարգացման բանկից, Նավթ Արտահանող Երկրների Կազմակերպության Միջազգային զարգացման հիմնադրամից (OPEC Fund for International Development), Հարավարևելյան Եվրոպայի Եվրոպական հիմնադրամից (European Fund for Southeast Europe), Արտասահմանյան Մասնավոր Ներդրումների Կորպորացիայից (Overseas Private Investment Corporation), Կանաչը աճի համար հիմնադրամից (Green for Growth Fund), Զարգացման Եվրոպական Ֆինանսական Ինստիտուտների Ասոցիացիայի (Association European Development Finance Institutions) անդամ ֆինանսական կազմակերպություններից, «Ռեսպոնսաբիլիթի Ինվեսթմենթս էյ-ջի»-ից (responsAbility Investments AG), Միկրոֆինանսավորման ընդլայնման հաստատությունից (Microfinance Enhancement Facility S.A.), Տրիոդոս Բանկ Վի-էն-ից (Triodos Bank VN), «էյ-Սի-Թի-Այ-էյ-էմ»-ից (ACTIAM) ներգրավված միջոցները պարտադիր պահուստավորման նորմատիվի հաշվարկում ենթակա են նվազեցված դրույքաչափով ընդգրկման, եթե ներգրավված միջոցի ներգրավման պահից մինչև մարումն ընկած ժամկետը փոքր չէ 4 տարուց: Սույն կետով սահմանված բանկի՝ վարկանիշ չունենալու դեպքում հաշվի է առնվում տվյալ բանկի գործունեության նկատմամբ հսկողության հնարավորություն ունեցող անձի վարկանիշը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:
3. Սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված ներգրավման պահից մինչև մարումն ընկած ժամկետը 4 տարուց ոչ պակաս ժամկետով ներգրավված միջոցներին վերաբերող դրույքաչափերը տարածվում են միայն սույն որոշման ուժի մեջ մտնելուց հետո ներգրավված միջոցների վրա:
4. Սույն որոշման 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված ներգրավման պահից մինչև մարումն ընկած ժամկետը 2 տարուց ոչ պակաս ժամկետով ներգրավված միջոցներին վերաբերող դրույքաչափերը տարածվում են սույն որոշման ուժի մեջ մտնելուց հետո ներգրավված միջոցների վրա, ինչպես նաև 2015 թվականի մարտի 1-ից հետո Կանոնակարգ 2-ի Հավելված 11-ի 1.2 և 1.4 կետերի պահանջները բավարարող պարտատոմսերով (պարտքային արժեթղթերով) ներգրավված միջոցների վրա և 2015 թվականի մարտի 1-ից հետո ներգրավված միջոցների վրա, որոնց՝ սույն որոշման ուժի մեջ մտնելու օրը մինչև մարումն ընկած ժամկետը գերազանցում է 2 տարին:
5. Սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ մինչև մարումն ընկած ժամկետը 2 տարին չգերազանցող ՀՀ դրամով ներգրավված միջոցների դիմաց Կենտրոնական բանկում դրամով տեղաբաշխվող պարտադիր պահուստների նվազագույն չափը սահմանվում է ներգրավված միջոցների 2 տոկոսի չափով, իսկ արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց՝ ներգրավված միջոցների 20 տոկոսի չափով, բացառությամբ 2015 թվականի մարտի 1-ից հետո Կանոնակարգ 2-ի Հավելված 11-ի 1.2 և 1.4 կետերի պահանջները բավարարող պարտատոմսերով (պարտքային արժեթղթերով) ներգրավված միջոցների:
6. Ներգրավված միջոցների վաղաժամկետ մարման դեպքում Կանոնակարգ 2-ի 53.1 կետով սահմանված պահուստավորման դրույթները շարունակում են տարածվել 2015 թվականի մարտի 1-ից հետո ներգրավված այն միջոցների վրա, որոնք մինչև սույն որոշման ուժի մեջ մտնելը պարտադիր պահուստավորման նորմատիվի հաշվարկում երբևէ ընդգրկվել են նվազեցված դրույքաչափով:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
13 նոյեմբերի 2015 թ., N 236-Ն

Ֆինանսական կազմակերպությունների համար գույքի գնահատում իրականացնող ընդունելի գնահատողների ընտրության մասին[*]

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին հաճախակի ուղղվում են հարցադրումներ և բողոքներ ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցող գույքի գնահատողների (այսուհետ՝ նաև անկախ գնահատող) փոխկապակցվածության և գործարքներում շահագրգռվածության մասին:

Այս առումով, սույն պարզաբանումը վերաբերում է այն դեպքերին, երբ ֆինանսական կազմակերպությունը օրենսդրությամբ պարտավոր է կամ իր որդեգրած քաղաքականությամբ որոշել ու հայտարարել է, որ համագործակցելու է անկախ գնահատողի հետ:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը մշտապես համագործակցում է ֆինանսական ծառայությունների ոլորտի շահագրգիռ մարմինների և կազմակերպությունների հետ: Համագործակցության շրջանակներում պարբերաբար կազմակերպում և իրականացնում է քննարկումներ, որոնք նպատակ ունեն բացահայտելու ֆինանսական ծառայությունների ոլորտի խնդիրները և գտնելու դրանց կարգավորման հնարավոր լուծումներ:

Հաշվի առնելով գույքը գնահատողների փոխկապակցվածության, գույքի գնահատման գործընթացում անկողմնակալ վարքագիծ դրսևորելու և գնահատման արդյունքների ոչ օբյեկտիվ լինելու վերաբերյալ հանրությունից ստացված ազդակները՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը բարձրացված խնդիրը քննարկել է շահագրգիռ կողմերի հետ, այդ թվում՝ ֆինանսական ծառայությունների ոլորտում իրավաբանական խորհրդատվություն մատուցող ընկերությունների հետ: Վերջիններիս կողմից ևս արձանագրվել են գույք գնահատողների փոխկապակցվածության, գույքի գնահատման գործընթացում անկողմնակալ վարքագիծ դրսևորելու և գնահատման արդյունքների ոչ օբյեկտիվ լինելու որոշ դեպքեր:

Հաշվի առնելով խնդրի գործնական կարևորությունը՝ Կենտրոնական բանկը հանրությունից և շահագրգիռ մարմիններից ու կազմակերպություններից ստացված տեղեկատվության հիման վրա ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցող անկախ գնահատողների վերաբերյալ ուսումնասիրություն է իրականացրել: Ուսումնասիրության արդյունքում բացահայտվել է, որ որոշ դեպքերում՝

- ֆինանսական կազմակերպության հետ համագործակցող գույքի գնահատողներից առնվազն երկուսը միմյանց հետ փոխկապակցված են: Ընդ որում, որոշ դեպքերում փոխկապակցվածությունն ակնհայտ է, քանի որ այդ ընկերությունները գործում են միևնույն հասցեում, կամ մեկ ընկերության տնօրենը միևնույն ժամանակ հանդիսանում է մյուսի տնօրեն.
- համագործակցող գնահատողների ցանկում ընդգրկված են այնպիսի ընկերություններ, որոնք ներառված չեն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից հրապարակված՝ անշարժ գույքի գնահատման գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող անձանց անվանացանկում:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը բարձրացված խնդրի և սույն պարզաբանման վերաբերյալ անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հանգամանքներին.

«Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածը սահմանում է անկախ գնահատողի անկախության սկզբունքը՝ համաձայն որի անշարժ գույքի գնահատման աշխատանքներն իրականացնելիս գնահատողն անկախ է և անշարժ գույքի գնահատումն իրականացնում է «Անշարժ գույքի գնահատման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, գնահատման ստանդարտին և օրենսդրությանը համապատասխան:

«Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ կրեդիտավորողին հնարավորություն է տրվել սահմանելու այն անձանց շրջանակը, որոնց հետ սպառողն իրավունք ունի կնքելու օժանդակ ծառայությունների մատուցման պայմանագրեր:

Սույն դրույթի կիրարկման նպատակով Կենտրոնական բանկը դեռևս 23.09.2008 թվականի «Սպառողական կրեդիտավորման մասին» թիվ 37 շրջաբերական գրությամբ առաջարկել է այն ֆինանսական կազմակերպություններին, որոնք համագործակցում են միայն մեկ օժանդակ ծառայություններ մատուցող

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. նոյեմբերի 3-ին (ՀՀԳՏ N28(540), 1.12.2015):

կազմակերպության (ապահովագրական ընկերություն, գնահատող կազմակերպություն և այլն) հետ, ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ մինչև «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ուժի մեջ մտնելն ապահովելու համար սպառողների կողմից օժանդակ ծառայություններ մատուցող անձանց շրջանակից ընտրություն կատարելու հնարավորությունը:

«Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» կանոնակարգ 4-ը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 71-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2013 թվականի թիվ 102-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգի 86-րդ կետի համաձայն՝ գրավի առարկայի գնահատման և վերահսկման ներքին հսկողության համակարգը նվազագույնը ներառում է՝

1) գրավի գնահատումն իրականացնող աշխատակիցների ընտրության և վերջիններիս աշխատանքի վերահսկման սկզբունքները,
2) անկախ գնահատող հանդիսացող անձանց ընտրության սկզբունքները,
3) գրավի վերագնահատումն իրականացնելու գործընթացը և հաճախականությունը,
4) գրավի առարկայի և դրա ապահովագրվածության վերահսկման գործընթացն ու հաճախականությունը, հատկապես ֆիզիկապես բանկի հսկողությունից դուրս (գրավատուի օգտագործման ներքո) գտնվող գրավների գծով,
5) պահանջ առ այն, որ գրավը գնահատող անձինք չպետք է շահագրգիռ լինեն վարկը տրամադրելու հարցում:

Ի կատարումն օրենսդրության պահանջների և վերոնշյալ թիվ 37 շրջաբերական գրության՝ ներկայումս ֆինանսական կազմակերպությունները սպառողներին առաջարկում են առնվազն երեք ընդունելի գնահատողներ:

Չնայած դրան, սպառողների կողմից կրկին ստացվում են բողոքներ, քանի որ գործնականում պատահում են դեպքեր, երբ չեն ապահովվում անկախ գնահատողների իրական անկախությունը և գնահատումների օբյեկտիվությունը: Այս իրավիճակը պայմանավորված է նրանով, որ չկան անկախ գնահատողների ընտրության միասնական չափանիշներ և ֆինանսական կազմակերպությունների կողմից խնդրի նկատմամբ միատեսակ մոտեցման կիրառում:

Արդյունքում, իրավակիրառ պրակտիկայում արձանագրվել են որոշ դեպքեր, երբ գնահատողներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված են եղել միմյանց կամ իրենց հետ համագործակցող ֆինանսական կազմակերպության հետ, ինչը սպառողի համար գործնականում չի ապահովել ընտրության լայն հնարավորություն: Նման իրավիճակում նույնիսկ ընդունելի գնահատողների ցանկից ընտրություն կատարելու ներկայումս սահմանված հնարավորությունը երբեմն հնարավոր է չապահովի գույքի գնահատման գործընթացի անաչառությունը, անկախությունը և օբյեկտիվ գնահատական տալու հնարավորությունը: Արդյունքում, ֆինանսական ծառայության սպառողը կորցնում է վստահությունը գնահատման արդյունքների օբյեկտիվության, դրա հիման վրա իրեն մատուցված ծառայության որակի և, ընդհանուր առմամբ, ֆինանսական համակարգի նկատմամբ, և ստեղծված իրավիճակում ոլորտում չի ապահովվում առողջ մրցակցային դաշտի ձևավորում:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հիմնական խնդիրներից է ֆինանսական համակարգում սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար անհրաժեշտ պայմանների ապահովումը:

Այս խնդրի իրագործման համար Կենտրոնական բանկի՝ ֆինանսական ծառայությունների քաղաքականությունն ու կարգավորումը իրականացվում է նաև այնպիսի սկզբունքների հիման վրա, որոնք սպառողի համար ապահովում են՝

- ծառայություններից օգտվելու ընտրության լայն հնարավորություն,
- սպառողի կողմից ծառայությունից օգտվելու հետ կապված խելամիտ սպասումների արդարացում,
- ֆինանսական կազմակերպությունների գործունեության կարգավորման և վարվելակերպի կատարելագործում, ինչպես նաև
- ոլորտում առողջ մրցակցային դաշտ ձևավորելու և ծառայություններ մատուցողների միջև ազատ մրցակցության համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծում:

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետով, ինչպես նաև

հիմք ընդունելով «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 397 հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը, «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» կանոնակարգ 4-ը հաստատելու և Հայաստանի Հանրապետության

կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 71-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2013 թվականի թիվ 102-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգի 86-րդ կետը, ինչպես նաև «Անշարժ գույքի գնահատման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները,

կարևորելով ֆինանսական ծառայությունների սպառողների համար ծառայություններից օգտվելու ընտրության հնարավորության, նրանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության համար անհրաժեշտ պայմանների ապահովումը և գույքի գնահատման բնագավառում իրավակիրառ պրակտիկայում ծագած հարցերի ճշտման անհրաժեշտությունը,

հաշվի առնելով ֆինանսական ծառայությունների ոլորտի կարգավորումների միատեսակության ապահովման և դրանց մեկնաբանման ու գործնական կիրառման հարցում միասնական մոտեցում ցուցաբերելու, և մասնավորապես, անկախ գնահատող հանդիսացող անձանց ընտրության միատեսակ սկզբունքների և չափանիշների սահմանման անհրաժեշտությունը,

նպատակ ունենալով ապահովել համապատասխան ֆինանսական ծառայություն մատուցելու նպատակով գույքի գնահատման գործընթացի անկախությունը, օբյեկտիվությունն ու անաչառությունը, ինչպես նաև բացառել գնահատման գործընթացում ներգրավված կողմերի շահագրգռվածությունը՝ Կենտրոնական բանկը պ ա շ տ ո ն ա պ ե ս պ ա ր զ ա բ ա ն ու մ է.

1. Ֆինանսական կազմակերպությունը կարող է իր կողմից առաջարկվող ծառայությունների մատուցման պայմանագրի կնքումը պայմանավորել առանձին գնահատողների ծառայություններից օգտվելու հետ՝ պայմանով, որ
   - ֆինանսական կազմակերպության համար ընդունելի գնահատողների ցանկը ներառի ոչ պակաս, քան 4 գնահատողի,
   - ֆինանսական կազմակերպության համար ընդունելի գնահատողների ցանկում կարող են ներառվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից հրապարակված՝ անշարժ գույքի գնահատման գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող անձանց անվանացանկում ընդգրկված անշարժ գույքի գնահատողներ,
   - ֆինանսական կազմակերպության համար ընդունելի 4 գնահատողները չպետք է փոխկապակցված լինեն միմյանց և (կամ) ֆինանսական կազմակերպության և (կամ) ֆինանսական կազմակերպության ղեկավարների հետ,
   - ֆինանսական կազմակերպությունը պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ և բավարար քայլերը պարզելու և բացահայտելու համար ընդունելի գնահատողների փոխկապակցվածությունը միմյանց հետ, ինչպես նաև իր և իր ղեկավարների հետ: Փոխկապակցվածություն կամ շահագրգռվածություն բացահայտելու դեպքում բացառել համագործակցությունը տվյալ գնահատողի հետ,
   - Ֆինանսական կազմակերպության և ընդունելի գնահատողի միջև կնքվող պայմանագրով պետք է սահմանվի դրույթ առ այն, որ գնահատողը պարտավոր է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ և բավարար քայլերը պարզելու և բացահայտելու համար գնահատողի կամ նրա աշխատակիցների շահագրգռվածությունը և (կամ) ազդեցությունը գնահատման արդյունքների վրա,
   - ֆինանսական կազմակերպությունը չպետք է հաճախորդին ուղղորդի կամ ծառայության մատուցումը պայմանավորի ընդունելի գնահատողների ցանկից որևէ գնահատողի ծառայություններից օգտվելու հետ:
2. Ֆինանսական կազմակերպությունը պարտավոր է առնվազն տարին մեկ անգամ վերանայել վերոնշյալ չափանիշներին համապատասխանող ընդունելի գնահատողների ցանկը:
3. Սույն պաշտոնական պարզաբանման իմաստով փոխկապակցվածությունը սահմանվում է ըստ «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով սահմանված իմաստի:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
10 նոյեմբերի 2015 թ., N 1

Բռնագանձման գործընթացում առաջացող որոշ հարցերի մասին[*]

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մի շարք առևտրային բանկերի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) հասցեագրված հարցադրումները՝ կապված Հայաստանի Հանրապետության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության (այսուհետ՝ ԴԱՀԿ) կողմից բանկային հաշիվների վրա բռնագանձում տարածելու, ինչպես նաև բանկի հաճախորդի (այսուհետ՝ հաճախորդ, ավանդատու) կողմից ավանդի գումարի մի մասը պահանջելու հետևանքով առաջացող որոշ խնդիրների պարզաբանման հետ,

Նպատակ ունենալով ներքոնշյալ խնդիրների լուծման համար առաջարկել այնպիսի լուծումներ, որոնք կապահովեն թե՛ բանկի, թե՛ վերջինիս հաճախորդների օրինական շահերի պաշտպանությունը,

լսելով ներքոնշյալ խնդիրների և դրանցից բխող հարցադրումների վերաբերյալ Կենտրոնական բանկի նախաձեռնությամբ ձևավորված աշխատանքային խմբի (կազմված՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ, «Ամերիաբանկ» ՓԲԸ, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ, «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ և Կենտրոնական բանկի իրավաբանական վարչության ներկայացուցիչներից) դիրքորոշումը,

կարևորելով առաջադրված հարցերի և դրանցում առկա խնդիրների պարզաբանման անհրաժեշտությունը՝ Կենտրոնական բանկը սույն պաշտոնական պարզաբանման շրջանակներում անդրադառնում է նշված խնդիրներին և դրանց հետ կապված հարցադրումներին: Մասնավորապես.

<u>Խնդիր 1.</u> Հաճախորդի կողմից բանկում ներդրված ժամկետային ավանդի մի մասը պահանջելու դեպքում (այդ դեպքը նախապես պայմանագրով կարգավորված չլինելու պարագայում) խնդիր է առաջանում ավանդի մնացորդի վրա հավելագրվող տոկոսների չափի հետ կապված:

Օրինակ՝ հաճախորդը բանկի հետ կնքել է ավանդի պայմանագիր՝ 100.000 ՀՀ դրամ գումարի չափով, 10 ամիս ժամկետով և 10% տոկոսադրույքով: 5 ամիս անց հաճախորդը բանկից պահանջում է իր ավանդի գումարի մի մասը (20.000 ՀՀ դրամ): Պայմանագրով նման դեպքի համար տոկոսների չափ նախատեսված չլինելու պարագայում բանկը լուծում է հաճախորդի հետ կնքված պայմանագիրը՝ ավանդի ողջ գումարի վրա հավելագրելով ցպահանջ ավանդի համար նախատեսված տոկոսները:

Հարցադրումներ.

Արդյո՞ք բանկն իրավունք ունի ավանդի ողջ գումարի վրա հավելագրել ցպահանջ ավանդի համար նախատեսված տոկոսներ: Արդյո՞ք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 905-րդ հոդվածի 2-րդ մասը պարտավորեցնում է բանկին՝ ավանդի գումարի մնացորդի վրա շարունակել հավելագրել պայմանագրով սահմանված տոկոսները:

Կենտրոնական բանկի դիրքորոշումը.

Կենտրոնական բանկը համարում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 905-րդ հոդվածի 2-րդ մասն իրենից ենթադրում է ***<u>իրավունք</u>*** ավանդատուի համար (ավանդի գումարն ամբողջությամբ կամ մասնակի պահանջելը) և ***<u>պարտավորություն</u>*** բանկի համար (ավանդի գումարն ամբողջությամբ կամ դրա մի մասը վերադարձնելը): Հարկ է նկատել, որ նշված դրույթը չի անդրադառնում ավանդի գումարի վրա տոկոսների հավելագրման կարգավորմանը, ուստիև ավանդի մնացորդի վրա նախապես կնքված պայմանագրով տոկոսների հավելագրման պարտավորություն բանկի համար չի նախատեսում: Ավելին՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 905-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի վերլուծությունը թույլ է տալիս փաստել, որ հաճախորդի կողմից ավանդի գումարի մի մասը պահանջելու դեպքում, թե՛ վերադարձված մասի և թե՛ ավանդի գումարի մնացորդի համար պետք է վճարվեն տոկոսներ բանկի կողմից ցպահանջ ավանդների համար սահմանված չափերով, եթե կողմերի միջև այլ պայմանավորվածություն առկա չէ (օրինակ՝ տոկոսների այլ չափ նախատեսված չէ պայմանագրով):

<u>Խնդիր 2.</u> Այն դեպքերում, երբ բանկի հաճախորդի ժամկետային ավանդի վրա ԴԱՀԿ ծառայության կողմից բռնագանձում է տարածվում, բանկերի մոտ ավանդի գումարի վրա տոկոսների հաշվեգրման հետ կապված խնդիրներ են առաջանում:

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. նոյեմբերի 17-ին (ՀՀԳՏ N28(540), 1.12.2015):

Օրինակ՝ հաճախորդը բանկի հետ կնքել է ավանդի պայմանագիր՝ 100.000 ՀՀ դրամ գումարի չափով, 10 ամիս ժամկետով և 10% տոկոսադրույքով: Պայմանագիրը կնքելուց 5 ամիս անց ԴԱՀԿ ծառայության կողմից արգելադրվում է հաճախորդի ավանդային հաշիվը և իրականացվում բռնագանձում՝ պարտավորության չափով (20.000 ՀՀ դրամ): Այս դեպքում բանկերը 20.000 ՀՀ դրամ գումարի չափով փոխանցում են ԴԱՀԿ ծառայության համապատասխան հաշվին, իսկ մնացած 80.000 ՀՀ դրամ գումարի վրա հաշվեգրվում են տոկոսներ ցպահանջ ավանդի համար նախատեսված տոկոսադրույքով:

Հարցադրումներ.

1) Արդյո՞ք բանկն իրավունք ունի իրականացնելու տոկոսների վերահաշվարկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 905-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դրույթների համաձայն (հաշվեգրել ցպահանջ ավանդի համար նախատեսված տոկոսներ):

2) Արդյո՞ք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 905-րդ հոդվածի 2-րդ մասը պարտավորեցնում է բանկին՝ բռնագանձված գումարը ԴԱՀԿ ծառայության հատուկ հաշվին ուղարկելուց հետո շարունակել ավանդի պայմանագիրը՝ ավանդի մնացորդի վրա հաշվեգրելով նույն տոկոսները:

Կենտրոնական բանկի դիրքորոշումը.

Կենտրոնական բանկն արձանագրում է, որ հաճախորդի ավանդի գումարի վրա ԴԱՀԿ ծառայության կողմից բռնագանձում տարածելու ոչ բոլոր դեպքերում է, որ բանկը կարող է իրականացնել տոկոսների վերահաշվարկ՝ հաշվեգրելով ցպահանջ ավանդի համար նախատեսված տոկոսներ: Անհրաժեշտ է տարբերակել ԴԱՀԿ ծառայության կողմից հարկադիր կատարման վարույթների 2 տեսակ *(ըստ վարույթի համար հիմք հանդիսացող փաստերի)*: Մասնավորապես՝

- ***օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռի*** (այսուհետ՝ վճիռ) դեպք և
- հանրային իրավական դրամական պահանջ հանդիսացող պարտադիր կատարման ենթակա ***անբողոքարկելի վարչական ակտի*** (այսուհետ՝ անբողոքարկելի վարչական ակտ) դեպք:

Նման տարբերակման համար հիմք է հանդիսանում այն հանգամանքը, որ իրավական ակտը մի դեպքում ընդունվում է դատարանի կողմից, իսկ մյուս դեպքում՝ վարչական մարմնի: Այսինքն՝ մի դեպքում բանկի ավանդատու հանդիսացող պարտատիրոջ գործողությունների (կամ անգործության) իրավաչափությունը քննության է ենթարկվում *ՀՀ արդարադատություն իրականացնող մարմնի*, իսկ մյուս դեպքում՝ *վարչարարություն իրականացնող մարմնի* կողմից:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ օրենսդիր մարմինը նմանատիպ տարբերակում ամրագրել է նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում: Մասնավորապես. *հաշվի առնելով արդարադատություն իրականացնող մարմնի կողմից քննության անցկացման կարևորությունը*՝ ՀՀ օրենսդիր մարմինը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-րդ մասով նախատեսել է ընդհանուր նորմից բացառություններ, որոնց պարագայում հանրային իրավական դրամական պահանջները ենթակա են հարկադիր կատարման՝ ***օրինական ուժի մեջ մտած վճռով*** տրված կատարողական թերթի հիման վրա: Նման բացառությունների շարքում են նաև 200.000 ՀՀ դրամ գումարը գերազանցող հանրային իրավական դրամական պահանջները, որոնց վրա ԴԱՀԿ ծառայության կողմից բռնագանձում իրականացնելու համար օրենսդիրը, հաշվի առնելով դրամական պահանջի համեմատական մեծ չափը, նախատեսել է արդարադատություն իրականացնող մարմնի կողմից կայացված վճռի առկայությունը:

Կենտրոնական բանկը հաշվի է առնում նաև այն հանգամանքը, որ գործնականում առավել շատ են այն դեպքերը, երբ համեմատաբար փոքր գումարի չափով առկա անբողոքարկելի վարչական ակտով սկսված կատարողական վարույթների արդյունքում հաճախորդը կորցնում է այդ գումարը մի քանի անգամ գերազանցող թե՛ արդեն իսկ ստացված տոկոսները, թե՛ ապագայում ստացվելիք տոկոսները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կենտրոնական բանկը համարում է, որ ավանդի գումարի վրա բռնագանձում իրականացնելիս, բանկի գործողությունները պետք է տարբերակված լինեն՝ կապված ԴԱՀԿ ծառայության կողմից կատարողական վարույթի փաստական հիմքերի (վճիռ/անբողոքարկելի վարչական ակտ) հետ:

Կենտրոնական բանկն ամրագրում է, որ առաջին դեպքում ***(վճիռ)*** բանկը կարող է ավանդի գումարի վրա հավելագրել ***ցպահանջ*** ավանդի համար նախատեսված տոկոսներ, եթե կողմերի միջև առկա չէ այլ պայմանավորվածություն (օրինակ՝ կնքված պայմանագրով նախատեսված է հավելագրվող տոկոսների այլ չափ կամ այլ պայման):

Ինչ վերաբերում է ***անբողոքարկելի վարչական ակտի*** հիմքով հարուցված կատարողական վարույթին, ապա Կենտրոնական բանկը հարկ է համարում տարբերակել հետևյալ 2 դեպքերը.

- Ավանդի տեսակի (պրոդուկտի) համար նախատեսված է որոշակի գումարի նվազագույն շեմ,
- Պրոդուկտի համար նախատեսված չէ նվազագույն շեմ:

Կենտրոնական բանկն առանձնակի շեշտադրում է հատկապես այն դեպքերը, երբ ավանդի տվյալ պրոդուկտի համար նախատեսված չէ նվազագույն շեմ կամ տվյալ պրոդուկտի համար նախատեսված է ավանդի գումարի նվազագույն շեմ, սակայն բռնագանձման արդյունքում հաճախորդի ավանդի մնացորդը բավարարում է տվյալ ***պրոդուկտի*** համար նախատեսված ***նվազագույն շեմը:***

Կենտրոնական բանկը համարում է, որ նման իրավիճակում բանկն ավանդի գումարի մնացորդի վրա ***պետք է շարունակի հավելագրել պայմանագրով նախատեսված տոկոսները:***

Իսկ այն դեպքերում, երբ ավանդի տվյալ տեսակի (պրոդուկտի) համար նախատեսված է նվազագույն սահմանաչափ և բռնագանձման իրականացման արդյունքում հաճախորդի ավանդի գումարի մնացորդը ***չի բավարարում*** տվյալ պրոդուկտի համար նախատեսված նվազագույն սահմանաչափը, ապա ավանդի գումարի վրա ***բանկը կարող է հավելագրել ցպահանջ*** ավանդների համար սահմանված չափերով տոկոսներ, եթե կողմերի միջև առկա չէ այլ պայմանավորվածություն (օրինակ՝ պայմանագրով նախատեսված է հավելագրվող տոկոսների այլ չափ):

Խնդիր 3. Գործնականում խնդիրներ են առաջանում այն դեպքերում, երբ ԴԱՀԿ ծառայության կողմից բանկի հաճախորդի հաշիվների վրա բռնագանձում է տարածվում, իսկ բանկի հաճախորդը միևնույն բանկում ունի ինչպես ընթացիկ, այնպես էլ ավանդային հաշիվներ, որոնք էլ իրենց հերթին կարող են լինել ՀՀ դրամով և արտարժույթով: Առկա չէ օրենսդրական հստակ ձևակերպում առ այն, որ նկարագրված դեպքում բանկը պարտավոր է սկզբից արգելադրել հաճախորդի ընթացիկ հաշիվները, իսկ ընթացիկ հաշիվ չունենալու կամ դրանում բավարար մնացորդ չունենալու պարագայում միայն պետք է արգելադրվեն ավանդում առկա դրամական միջոցները: Ինչպես նաև հստակ կարգավորված չէ միևնույն բանկում ՀՀ դրամով և արտարժույթով դրամական միջոցներ ունենալու դեպքում, ո՞ր արժույթի դրամական միջոցներն են ենթակա ***առաջնահերթ*** արգելադրման:

Օրինակ՝ Հաճախորդը բանկում ունի ընթացիկ հաշիվ (մնացորդը՝ 50.000 ՀՀ դրամ), ինչպես նաև միևնույն բանկում առկա է հաճախորդի կողմից ներդրված ավանդ՝ 1.000.000 ՀՀ դրամ գումարի չափով: Բանկը, ստանալով ԴԱՀԿ ծառայության կողմից բռնագանձման մասին որոշումը (10.000 ՀՀ դրամ գումարի չափով), բռնագանձումն իրականացնում է հաճախորդի ավանդում առկա դրամական միջոցների հաշվին: Արդյունքում՝ հաճախորդը կրում է ֆինանսական կորուստներ՝ զրկվելով ներդրած ավանդի վրա հավելագրվող տոկոսներից, այն պարագայում, երբ նույն բանկը կարող էր բռնագանձում տարածել ընթացիկ հաշվին առկա դրամական միջոցներից:

Հարցադրումներ.

Արդյո՞ք բանկն իրավունք ունի ԴԱՀԿ ծառայության կողմից ուղարկված բռնագանձումն իրականացնել հաճախորդի ավանդում առկա դրամական միջոցներից, եթե միևնույն բանկում հաճախորդի ընթացիկ հաշվին առկա է բավարար մնացորդ, և ի՞նչ առաջնահերթությամբ պետք է իրականացվի բռնագանձումը, եթե նույն բանկում հաճախորդը ունի ՀՀ դրամով և արտարժույթով դրամական միջոցներ:

Կենտրոնական բանկի դիրքորոշումը.

Կենտրոնական բանկը համարում է, որ բռնագանձումը պետք է իրականացվի առաջին հերթին հաճախորդի ***ընթացիկ հաշիվներից***, իսկ ***ընթացիկ հաշիվ չունենալու կամ ընթացիկ հաշվին բավարար մնացորդ չլինելու պարագայում***՝ ԴԱՀԿ ծառայության կողմից իրականացվող բռնագանձումը տարածել նաև հաճախորդի ավանդի գումարի վրա: Նշված դիրքորոշման համար Կենտրոնական բանկը հիմք է ընդունում այն հանգամանքը, որ օրենսդիրը, նպատակ ունենալով պաշտպանել ավանդատուների օրինական շահերը, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 46-րդ և 47-րդ հոդվածների 2-րդ մասերով ***տարբերակել է պարտապանի դրամական միջոցները*** հետևյալ կերպ՝

- պարտապանի բանկային (ընթացիկ) հաշիվներում առկա դրամական միջոցներ և
- ավանդներում առկա դրամական միջոցներ:

Ինչ վերաբերում է միևնույն բանկում ՀՀ դրամով և արտարժույթով դրամական միջոցների վրա բռնագանձումն իրականացնելու դեպքին, ապա հարկ է նկատել, որ օրենսդիրն այս դեպքում ևս տարբերակված մոտեցում է ցուցաբերել՝ առանձին (իրար հաջորդող) հոդվածների միջոցով ամրագրելով ՀՀ արժույթով և արտարժույթով դրամական միջոցների վրա իրականացվող բռնագանձման գործընթացի կարգավորումները: Ուստի, նշված դեպքում բանկը պետք է արգելադրի պարտապանի դրամական միջոցները հետևյալ կերպ՝

- Ընթացիկ հաշիվներում ՀՀ դրամով առկա դրամական միջոցները,
- Ընթացիկ հաշիվներում արտարժույթով առկա դրամական միջոցները,
- Ավանդներում ՀՀ դրամով առկա դրամական միջոցները,
- Ավանդներում արտարժույթով առկա դրամական միջոցները:

Խնդիր 4. ԴԱՀԿ ծառայության կողմից իրականացվող բռնագանձման գործընթացում առաջանում են խնդիրներ նաև այն դեպքում, երբ պարտապանի ***քարտային հաշիվն ունի վարկային գծի հնարավորություն (օվերդրաֆտ):***

Օրինակ՝Բանկի հաճախորդն ունի վճարային քարտ (քարտային հաշիվ), որի վրա առկա են վարկային միջոցներ: ԴԱՀԿ ծառայության կողմից սկսված կատարողական վարույթի ընթացքում Բանկն արգելադրել է հաճախորդի քարտային հաշվի վարկային միջոցները (օվերդրաֆտ):

Հարցադրում.

Արդյո՞ք բանկը նկարագրված դեպքում կարող է արգելադրել հաճախորդի քարտային հաշվի վարկային միջոցները (օվերդրաֆտ):

Կենտրոնական բանկի դիրքորոշումը.

Կենտրոնական բանկը համարում է, որ կատարողական վարույթի ընթացքում բանկերի կողմից չեն կարող արգելադրվել պարտապան հանդիսացող հաճախորդին չպատկանող դրամական միջոցները: Օվերդրաֆտը՝ որպես վարկային պրոդուկտ, իրենից ենթադրում է վճարային (հաշվարկային) քարտի միջոցով դրամական միջոցների տրամադրման հնարավորություն, ուստի կատարողական վարույթի շրջանակներում բանկի կողմից ենթակա չէ արգելադրման:

Խնդիր 5. ԴԱՀԿ ծառայության կողմից իրականացվող բռնագանձման գործընթացում առաջանում են նաև այլ խնդիրներ, որոնք կապված են պարտապանի ***քարտային հաշվի վարկային գծի (օվերդրաֆտ) օգտագործման հետ:***

Օրինակ՝ անբողոքարկելի վարչական ակտի հիմքով սկսված ԴԱՀԿ ծառայության կողմից իրականացվող բռնագանձման գործընթացում արգելադրվել են հաճախորդին պատկանող բանկային հաշիվներում առկա դրամական միջոցները *(բացառությամբ՝ քարտային հաշվին առկա վարկային միջոցների (օվերդրաֆտ)*: Բանկը, հիմք ընդունելով նշված հանգամանքը, կասեցնում կամ որևէ այլ կերպ սահմանափակում է հաճախորդի քարտային հաշվի վարկային միջոցների (օվերդրաֆտ) օգտագործման հնարավորությունը:

Հարցադրում.

Արդյո՞ք ***անբողոքարկելի վարչական ակտով*** սկսված կատարողական վարույթի ընթացքում հաճախորդի հաշիվների արգելադրումը *(բացառությամբ՝ քարտային հաշվին առկա վարկային միջոցների (օվերդրաֆտ)* կարող է հիմք հանդիսանալ հաճախորդի քարտային հաշվի վարկային միջոցների (օվերդրաֆտի) օգտագործման հնարավորությունը բանկի կողմից կասեցնելու կամ սահմանափակելու համար:

Կենտրոնական բանկի դիրքորոշումը.

Կենտրոնական բանկն ամրագրում է, որ այն դեպքում, երբ կատարողական վարույթը սկսելու համար հիմք է հանդիսացել ***անբողոքարկելի վարչական ակտը,*** ապա բռնագանձման գործընթացում հաճախորդի բանկային հաշիվների *(բացառությամբ՝քարտային հաշվին առկա վարկային միջոցների (օվերդրաֆտ)* արգելադրումը չի կարող հիմք հանդիսանալ հաճախորդի քարտի վարկային միջոցների (օվերդրաֆտ) օգտագործման հնարավորությունը բանկի կողմից կասեցնելու կամ սահմանափակելու համար:

Ելնելով վերոգրյալից, նպատակ ունենալով ճշտել օրենսդրության կիրառման բնագավառում ծագած հարցերը և հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 905-րդ և 887-րդ հոդվածները, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, 46-րդ, 47-րդ, 71-րդ հոդվածները, հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ***պաշտոնապես պարզաբանում է.***

1. ***Ավանդատուի կողմից*** ավանդի գումարի մի մասը մինչև պայմանագրով նախատեսված ժամկետը (կամ պայմանի վրա հասնելը) բանկից պահանջելու դեպքում, բանկը կարող է ավանդի գումարի (այդ թվում՝ մնացորդի) վրա հավելագրել տոկոսներ՝ ցպահանջ ավանդների համար սահմանված չափերով, եթե կողմերի միջև առկա չէ այլ պայմանավորվածություն (օրինակ՝ պայմանագրով նախատեսված է հավելագրվող տոկոսների այլ չափ):
2. ԴԱՀԿ ծառայության կողմից հաճախորդի ավանդում առկա դրամական միջոցները բռնագանձվելու դեպքում բանկի կողմից ստուգվում է կատարողական վարույթի հիմքը.
   - Եթե կատարողական վարույթի համար ***հիմք է հանդիսանում վճիռը,*** ապա հաճախորդի ավանդում առկա դրամական միջոցներից բանկը պարտավորության չափով իրականացնում է փոխանցումը

ԴԱՀԿ ծառայության համապատասխան հաշվին, իսկ ավանդի գումարի վրա բանկը կարող է հավելագրել ցպահանջ ավանդների համար սահմանված չափերով տոկոսներ, եթե կողմերի միջև առկա չէ այլ պայմանավորվածություն (օրինակ՝ պայմանագրով նախատեսված է հավելագրվող տոկոսների այլ չափ):

- Եթե կատարողական վարույթի համար հիմք է հանդիսանում ***անբողոքարկելի դարձած վարչական ակտը,*** իսկ ավանդի տվյալ տեսակի (պրոդուկտի) համար նախատեսված չէ նվազագույն սահմանաչափ կամ նախատեսված է նվազագույն սահմանաչափ, սակայն բռնագանձման իրականացման արդյունքում հաճախորդի ավանդի գումարի մնացորդը բավարարում է տվյալ պրոդուկտի համար նախատեսված նվազագույն սահմանաչափը, ապա բանկը հաճախորդի ավանդից պարտավորության չափով իրականացնում է փոխանցումը ԴԱՀԿ ծառայության համապատասխան հաշվին, իսկ ավանդի գումարի մնացորդի վրա շարունակում հավելագրել պայմանագրով նախատեսված տոկոսները:
- Եթե կատարողական վարույթի համար հիմք է հանդիսանում ***անբողոքարկելի դարձած վարչական ակտը***, իսկ ավանդի տվյալ տեսակի (պրոդուկտի) համար նախատեսված է նվազագույն սահմանաչափ, և բռնագանձման իրականացման արդյունքում հաճախորդի ավանդի գումարի մնացորդը չի բավարարում տվյալ պրոդուկտի համար նախատեսված նվազագույն սահմանաչափը, ապա բանկը հաճախորդի ավանդից պարտավորության չափով իրականացնում է փոխանցում ԴԱՀԿ ծառայության համապատասխան հաշվին, իսկ ավանդի գումարի վրա բանկը կարող է հավելագրել ցպահանջ ավանդների համար սահմանված չափերով տոկոսներ, եթե կողմերի միջև առկա չէ այլ պայմանավորվածություն (օրինակ՝ պայմանագրով նախատեսված է հավելագրվող տոկոսների այլ չափ):

3. ԴԱՀԿ ծառայության կողմից բռնագանձման մասին որոշում ստանալու դեպքում բանկը բռնագանձումն իրականացնում է ստորև նշված հերթականությամբ (առաջին հերթում նշված հաշիվներում դրամական միջոցներ չունենալու կամ նման հաշիվներում պարտավորության չափով մնացորդ չունենալու պարագայում բանկն արգելադրում է հաջորդ հերթում առկա դրամական միջոցները).

- ***Ընթացիկ*** հաշիվներում ***ՀՀ դրամով*** առկա դրամական միջոցները,
- ***Ընթացիկ*** հաշիվներում ***արտարժույթով*** առկա դրամական միջոցները,
- ***Ավանդներում ՀՀ դրամով*** առկա դրամական միջոցները,
- ***Ավանդներում արտարժույթով*** առկա դրամական միջոցները:

4. ԴԱՀԿ ծառայության կողմից իրականացվող բռնագանձման գործընթացում պարտապան հանդիսացող հաճախորդի վճարային (հաշվարկային) քարտի ***վարկային միջոցները (օվերդրաֆտ) ենթակա չեն արգելադրման:***

5. ***Անբողոքարկելի վարչական ակտով սկսված*** կատարողական վարույթի ընթացքում հաճախորդի բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների (բացառությամբ՝ քարտային հաշվին առկա վարկային միջոցների (օվերդրաֆտ)) արգելադրումը հիմք չի կարող հանդիսանալ բանկի համար հաճախորդի քարտային հաշվի վարկային միջոցների (օվերդրաֆտ) օգտագործման հնարավորության կասեցման կամ որևէ կերպ սահմանափակման համար:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
19 նոյեմբերի 2015 թ., N 2

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ
ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՆՈՅԵՄԲԵՐ 2015)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
էլ. փոստ՝ sd.mpd@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Իրական հատվածի ցուցանիշներ 56

Մակրոտնտեսական ցուցանիշներ

Գների ինդեքսներ

Գնաճ

Գնաճին առավելապես նպաստած ապրանքախմբերը

Բնականոն գնաճ

Բնականոն գնաճին առավելապես նպաստած ապրանքատեսակները

Արտաքին հատվածի ցուցանիշներ 59

Ապրանքների արտահանում և ներմուծում

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումները

Դրամական փոխանցումների ներհոսքն ըստ վճարային հաշվեկշռի

Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք

ՀՀ վճարային հաշվեկշիռ (ստանդարտ ներկայացում ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 6-րդ հրատարակության մեթոդաբանության)

ՀՀ միջազգային ներդրումային դիրք (ստանդարտ ներկայացում ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 6-րդ հրատարակության մեթոդաբանության)

ՀՀ համախառն արտաքին պարտք (ստանդարտ ներկայացում ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 6-րդ հրատարակության մեթոդաբանության)

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը

ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը

Պետական բյուջեի ցուցանիշներ 74

Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները

Դրամավարկային ցուցանիշներ 75

Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ

Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ

ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ

Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում

Ֆինանսական շուկա 85

Տոկոսադրույքներ

Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը

ՀՀ ԿԲ կողմից սահմանված դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքներ

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը

ՀՀ ԿԲ կողմից կնքված արժութային սվոպ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները

Ռեպո շուկայի շրջանառությունը

Միջբանկային բորսայական վարկերի ծավալը և միջին տոկոսադրույքը

Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ դրամով և արտարժույթով տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի

Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները
Պետական (գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը
ՀՀ եվրոպարտատոմսերով երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները
ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Արժութային շուկայում իրականացված գործառնությունները
ՀՀ ֆոնդային բորսայում արտարժութային գործառնությունների ծավալները
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը
Վարկային ներդրումներ 108
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային ավանդները և վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների վարկային գործառնությունների գործիքակազմը
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի ավանդներ 119
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 121
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
ՀՀ առևտրային բանկային հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
